

Ես այդ հարցին մի պատասխան ունեմ՝ ես ծնողի եւ հոր միջեւ ընտրություն անելու ոչ կարողություն ունեմ, ոչ ցանկություն, ոչ առիթ: Ես հոգեպես ծնունդն եմ Սուրբ Էջմիածնի, հաձնված եմ Կոտայքի թեմի առաջնորդի խնամքին, իմ հոգու, խղճի դեմ բան չի լինի: Ընդհակառակը, մի փոքրիկ լավի դիմաց գնահատվել ենք, խրախուսվել ենք:

Կարդացեք՝ էջ 4

Արարատ Միրզոյան-2026-ը հանդես է գալիս, ինչպես ասում են, նույն «կորպուսով», բայց ունի, կարծես, նոր կարգավորումներ՝ բարկանալ, տաքանալ, խոսել արտահայտիչ ժեստիկուլյացիայով, օգտագործել մանիպուլյացիոն համեմատություններ, հերքել ամեն ինչ ու ամեն կերպ, կիրառել արտիստիզմ, օգտվել Փաշինյանական լեքսիկոնից:

Կարդացեք՝ էջ 5

Քաղաքացին ցանկացել է «Հայփոստով» ծանրոց ուղարկել ԱՄՆ-ում բնակվող իր բարեկամին՝ օրենքով չարգելված իր: Ապրանքը կշռել է, ասել են՝ պետք է տեղափոխման ծառայության համար վճարի՝ 1 կգ-ի դիմաց 10 հազար դրամ, բայց նրանից եւս 10 տոկոս հավելավճար են պահանջել. ասել են՝ ԱՄՆ նախագահի կողմից սահմանված մաքսատուրքն է:

Կարդացեք՝ էջ 6

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am

ISSN 1829-2372

ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 5 (4120), 24 հունվար, շաբաթ, 2026

Հրապարակ

www.hraparak.am

Ռիփսիմե Հունանյանի նկատմամբ «ահեղ դատաստանն» ահուսարսափի մեջ է գցել ՔՊ-ականներին, իշխող ֆրակցիայում մի ստվար զանգված անարդար է համարում տեղի ունեցածը, թեեւ, իհարկե, չեն համարձակվում այդ մասին բարձրաձայնել, բայց փորձում են գուշակել՝ ինչո՞ւ այդպես վարվեց Փաշինյանը Հունանյանի հետ: Եթե ընդամենը քավության նոխազ էր պետք նախընտրական շրջանում, որ համոզի, թե չի հանդուրժելու իր խոսքին հաշիվ չտվող թիմակցին, ապա Հունանյանի վերջին հայտարարությունը՝ գլուխների մասին, ամենաքիչ քննարկվածն էր: Շատերը հիշատակում են Էմմա Պալյանի՝ սուրբծննդյան օրը կազմակերպված «ուղտաերթի» մասին սկանդալային գրառումը, որի պատճառով ՔՊ-ին մի քանի օր «քացու տակ էին գցել», ծաղրում էին համացանցում, մինչդեռ Պալյանին ձեռք չտվեց, իսկ Հունանյանի «մեզ միայն զինվորներ պետք չեն, գլուխներ էլ են պետք» արտահայտության մեջ առանձնապես արտառոց բան չկար, ինչո՞ւ պարտադրեցին հեռանալ ԱԺ հանձնաժողովի նախագահի պաշտոնից եւ զրկեցին հաջորդ ընտրություններին մասնակցելուց: Շատերը կասկածներ ունեն՝ գուցե Փաշինյանն արդեն որոշվ՞ել է, թե ում է տանելու խորհրդարան: Իր «ստրուկների»՝ ուսապարկերի ցանկն արդեն կազմել է, իսկ մնացածն առաջիկա ամիսներին տարբեր պատրվակներով ու հերթով փուռն են գնալու:

Գրել էինք, որ ՔՊ-ականները որոշել են նշել Արփի Դավոյանի դստեր ծնունդը՝ երեխայի ծնվելուց մոտ 2 ամիս անց: Տեղեկացանք, որ անցած շաբաթ հավաքվել են Հատիսի «Սարին» ռեստորանում: Հավաքույթին մոտ 60 մարդ է մասնակցել: Նիկոլ Փաշինյանը եկել է մենակ՝ առանց կնոջ, եւ ինչը ներկաների զարմանքն է հարուցել՝ իր հետ սեփական մատուցողին ու իր բաժակն է բերել: Ներկաները մեզ պատմեցին, որ Փաշինյանի բերած մատուցողը մի 18-20 տարեկան պատանի էր, միայն իրեն էր սպասարկում: Իսկ երբ նստել է սեղանի մոտ, հրահանգել է հավաքել իր դիմաց դրված բաժակները եւ իր հետ բերած բաժակով է ամեն ինչ խմել: Ներկաները նկատել են նաեւ, որ բավականին անտրամադիր է, հրաժարվել է նվագելուց, պարելուց եւ առաջինն է հեռացել խնջույքից: Ի դեպ, Արփի Դավոյանի երեխայի հայրը եւս ներկա չի եղել: Լավատեղյակ անձը մեզ բացատրեց, որ հավանաբար կասկածում է, որ իրեն ուզում են թունավորել: Օրինակ, հայտնի «Նովիչոկ» նյութը տարբեր առարկաների, այդ թվում՝ բաժակի միջոցով են մարդուն հրամցնում, իսկ ուտելիքին ու խմիչքին չի կասկածել, քանի որ բոլորն են դրանից օգտվել:

Պարականոն

Ձեր կարծիքով, ինչո՞ւ է Նիկոլ Փաշինյանը կամայական, մեկը մյուսից անկանխատեսելի, անտրամաբանական ու հակաօրինական որոշումներ կայացնում: Ասենք՝ չունենալով կադրային բավարար բանկ, առանց լուրջ պատճառի աշխատանքից ազատում է ՊԵԿ-ի, Քննչականի նախագահներին կամ մանդատից զրկում է իրեն հավատարմորեն ծառայած պատգամավորին, մերժում է մյուսի գրանցումը՝ որպես պատգամավորի թեկնածու: Ստատուս է գրում՝ «ստահակ, հիմա կգանք քո ետեւից», ու ԱԱԾ-ն ուղարկում մեկ արտահայտություն արած մարդու հետեւից: Թիրախավորում է սրբազանին՝ իբրեւ թե կուսակրոնությունը խախտելու համար, ապա մի անհեթեթ գործ հարուցել տալիս 8 տարի առաջ մեկի ուսապարկում թմրանյութ տեղադրելու համար եւ կալանավորում: Ողջ օրը խոսում է, որ բյուջեում բավարար փող չկա, ուստի հնարավոր չէ թոշակները բարձրացնել, իսկ հաջորդ պահին միլիարդներ է բաժանում իր՝ առանց այն էլ բարձր աշխատավարձ ստացող թիմակիցներին: Ինչո՞ւ է այս եւ հարյուրավոր այլ անբացատրելի, հակասական, չպատճառաբանված քայլերը ձեռնարկում՝ արժանանալով քննադատության, ծաղրի, նաեւ՝ սամադուր-ղեկավարի կոչման: Նպատակը, ըստ իս, մեկն է, որ ոչ ոք իրեն ապահովագրված չզգա, եւ յուրաքանչյուր մարդ մտածի, որ հաջորդ անգամ ինքն է sms ստանալու, հաջորդիվ իր տուն է ԱԱԾ-ն ուղարկելու, հաջորդ անգամ հայտնի չէ՝ իրեն բարձր պարգեւավճար կշնորհի՞, թե՞ բանտ կուղարկի: Երբ մարդիկ անորոշության մեջ են եւ չեն կարողանում կանխատեսել վերադասի, երկրի ղեկավարի վարքը, նրանք շարունակ լարված են, անընդհատ փորձում են գուշակել նրա ցանկությունները, հաճոյանալ նրան եւ «պերեստրախովկայի» ռեժիմում գործել, որ մի բան էլ ավելին անեն ու չընկնեն նրա «թարթափի» տակ: Շատ պարզ բանաձեւ է աշխատեցնում իր ենթականերին օրեցօր ավելի ստրկացնող բռնապետիկը:

Նիկոլ Փաշինյանը թեպետ ամեն հարմար առիթով կրկնում է, որ ժողովուրդն է որոշելու՝ 2026 -ին ով կլինի իշխանություն, սակայն ներկուսակցական վերջին հավաքների ժամանակ հետեւողականորեն կրկնում է, որ իրենց հաղթանակն այլընտրանք չունի: Թիմին ներշնչում է, թե անկասկած իրենք հաղթելու են, բայց պետք է այնպես անեն, որ ոչ թե 50+ 1, այլ 60 տոկոս ստանան՝ միահեծան իշխանություն ձեւավորելու համար: Թիմում շատերը լուրջ են ընդունել Փաշինյանի ասածը եւ իրենք էլ պոռոտախոսությամբ են զբաղված, սակայն ՔՊ-ում կան մարդիկ, որոնք հասկացել են՝ Փաշինյանն ընդամենը դուխ է տալիս թիմին, կարեւոր միջոցառումից առաջ հոգեբանական աշխատանք է տանում, որ հուսահատության, պարտվողականության տրամադրություններ բուն չդնեն թիմում՝ դրանից բխող հետեւանքներով, եւ «վիզ դրած» աշխատեն՝ հաղթանակի համար: Իսկ ընդդիմությունը, ճիշտ հակառակը՝ ողջ օրը խոսում է նրանից, որ «ՔՊ-ն արդեն հաղթել է», իսկ իրենք՝ պարտվել: Անգամ մարտավարություն ընտրելիս ու մարդկային հոգեբանության հարցերում նրանք զիջում են Փաշինյանի ճկունությանը:

ՆՈՐ ՄԱՐՄԻՆ Է ՁԵՎԱՎՈՐՎԵԼ ԿՐԵՄԼՈՒՄ

Ռուսաստանի նախագահի ադմինիստրացիայում նրա աշխատակազմի ղեկավարը եւ տեղակալները տարբեր ուղղություններով համակարգում են Կրեմլի ներքին եւ արտաքին քաղաքականությունը: Հայաստանի գծով կուրատորը դեռեւս անցած տարվա գարնանից, ինչպես հայտնի է, նախագահի աշխատակազմի ղեկավարի առաջին տեղակալ, Ռուսաստանի նախկին վարչապետ Սերգեյ Կիրիենկոն է, որը համակարգում է նաեւ Աբխազիայի, Հարավային Օսիայի եւ Մոդովայի ուղղությունները: Տեղեկացանք, սակայն, որ նրան առընթեր նոր կոմիտե է նաեւ ձեւավորվել, որը պետք է առավել համապարփակ զբաղվի Հայաստանի հարցերով: Չի բացառվում, որ այս որոշումն ընդունել են ի պատասխան ՀՀ իշխանությունների որդեգրած հակառուսական պայքարին, որը տարվում է «հիբրիդային պատերազմի» դեմ պայքարի անվան տակ: Նիկոլ Փաշինյանը, ինչպես հայտնի է, ընտրություններից առաջ որոշել է մեծ գումարներ կպցնել Արեւմուտքից՝ հիբրիդային պատերազմի դեմ պայքարի համար, եւ համախմբել Ռուսաստանը մերժող, Ռուսաստանից կտրվելու գծի կողմնակիցներին, ուստի, ընտրություններին մոտենալուն զուգահեռ, ավելի հաճախ են խոսելու այն մասին, որ Ռուսաստանը Հայաստանում հիբրիդային պատերազմ է վարում՝ ընդդիմադիր ինչ-որ շրջանակների իշխանության բերելու միտումով:

ԲՈԼՈՐԸ ՏԵՍՆՈՒՄ ԵՆ, ՈՐ ԱՅՍ ԱՄԵՆԸ ՎԵՀԱՓԱՌԸ ՉԻ ՍԿՍԵԼ

«Հրապարակի» զրուցակիցը ***Տեր Փառեն քահանա Առաքելյանն*** *է:*

- Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական տնօրինությամբ Տ. Պարթեւ եպիսկոպոս Բարսեղյանը, ազատվելով Գեղարքունյաց թեմի առաջնորդի պաշտոնից, նշանակվել է Շվեյցարիայի Հայոց թեմի առաջնորդ: Շվեյցարիայի Հայոց թեմի առաջնորդական տեղապահ Տ. Գուսան ծայրագույն վարդապետ Ալճանյանն էլ Հայրապետական տնօրինությամբ ազատվել է զբաղեցրած պաշտոնից: Կա նախադեպ, որ Վեհափառի կողմից կարգալույծ հռչակված կամ պաշտոնից ազատված հոգեւորականները չեն հեռանում զբաղեցրած պաշտոնից, քանի որ Նիկոլ Փաշինյանի եւ ուժային կառույցների անձնական պաշտպանության տակ են: Ի՞նչ եք կարծում, հնարավո՞ր է, որ Գուսան ծայրագույն վարդապետ Ալճանյանը նույնպես չհեռանա Շվեյցարիայի Հայոց թեմի առաջնորդական տեղապահի պաշտոնից եւ, ինչպես Հայաստանում ոմանք, այնպես էլ նա, դրսում խառնակչություններով զբաղվի՝ Եկեղեցին ու համայնքը պառակտի: Թեեւ պարզ է, որ շվեյցարական ոստիկանությունը դրան չի աջակցի:

Էջը՝
Հայկ
ԳԵՎՈՐԳՅԱՆԻ

- Թեմական առաջնորդների նշանակումները լրիվ գտնվում են Վեհափառի իրավասության ներքո, որը կատարվում է Հայ առաքելական եկեղեցու կանոնադրության համաձայն: Ըստ դրա՝ Վեհափառն ունի իրավունք՝ թեմական առաջնորդներին հեռացնելու, փոխելու, թեմեր հաստատելու: Այդ ամենն ամրագրված է Եկեղեցու կանոնադրությամբ, եւ Եկեղեցու համար նորություն չէ: Պարթեւ սրբազանն արդեն իսկ Շվեյցարիայում թեմի առաջնորդ է նշանակվել, իսկ նախկին առաջնորդը կգնա, թե ոչ, մենք չենք կարող հստակ ասել, քանի որ, ճիշտ եք նկատում, այո, կա նման նախադեպ, որ չեն ենթարկվում Եկեղեցու կանոնադրությանը, եւ ոմանք այդպես էլ չեն հեռանում: Ամեն դեպքում, ես այն կարծիքին եմ, որ պրոցեսները գուցե մի փոքր ձգձգվեն, սակայն Վեհափառի որոշումները, վստահաբար, արդարացվելու են թե՛ Մասյացոտնում, թե՛ Շվեյցարիայում եւ, առհասարակ, բոլոր այն վայրերում, որտեղ Վեհափառը կկայացնի որոշումներ:

- Մասյացոտնում ունենք նախադեպ, որ դատարանն ընդամենը մի քանի ժամում վճռեց՝ թեմի տիրադավ առաջնորդին պաշտոնում վերականգնել, որպես հայցի ապահովման միջանկյալ միջոց: Ի դեպ, թեմի քահանաները մեզ հետ զրույցներում պատմում են, որ այնպիսի սպառնալիքներ են ստանում, որ անգամ վախենում են իրենց ընտանիքի անդամներին տանը մենակ թողնել....

- Նախ, սկսենք նրանից, որ դատարանի որոշումն ի սկզբանե սխալ է, քանի որ, ըստ ՀՀ գործող սահմանադրության, Եկեղեցին անջատ է պետությունից: Այդ վճռով դատարանը ոտնահարել է ՀՀ սահմանադրությունը: Այն, ինչ կատարվում է, կատարվում է Եկեղեցու կանոնադրությամբ: Իսկ այդ կանոնադրությունը հաստատված է պետության կողմից: Եթե Եկեղեցու կանոնադրության համաձայն կատարվում է մի քայլ, իսկ հետո պետությունն այդ քայլի դեմ գործողություններ է կատարում, դա սխալ է եւ օրենքներին դեմ: Եթե թեմի առաջնորդ է նշանակվում, նա, ուշ թե շուտ, իր աշխատանքը սկսելու է: Հայր Ռուբենն այժմ այնտեղ է, քահանաների ճնշող մեծամասնությունն էլ իր կողքին է, թեմը գործում է, իսկ Հայր Ռուբենին բոլորս ենք ճանաչում, նա ուժեղ անձնավորություն է, պատրաստված հոգեւորական, որը, վստահաբար, հաջողելու է: Ինչ վերաբերում է քահանաների դեմ ճնշումներին, որոնց մասին մենք նույնպես լսում ենք տեղեկություններ, անցողիկ են: Դրանք քահանաներին համոզելու անազնիվ փորձեր են, որոնք ոչ մի հաջողություն չեն ունենալու:

- Բայց ինչպե՞ս եք պատկերացնում դա, ինչպե՞ս պետք է տիրադավները հասկանան, որ Եկեղեցին այլեւս իրենց տեղը չէ: Քանի դեռ Նիկոլ Փաշինյանը վարչապետ է, նրանք կգնա՞ն այդ քայլին:

- Եկեղեցին միշտ ունեցել է իր ավանդույթները, կանոնները, անկախ այն բանից, թե ով է եղել իշխանության ղեկին: Իհարկե, նրանք ունենում են որոշակի ազդեցություն, սակայն դա Եկեղեցու վրա որեւէ կերպ չի կարող ազդել, որովհետեւ Եկեղեցին իր առաքելությունն է կատարում: Իշխանությունները ուշ թե շուտ հեռանում են, իսկ Եկեղեցին մնում է: Հավատացյալների գերակշռող մեծամասնությունը չի ցանկանում, որ այս իրավիճակը շարունակվի: Հավատացյալ հոտը ցանկանում է ապրել հոգեւոր, եկեղեցական կյանքով, մենք անպայման պետք է այս հանգամանքը հաշվի առնենք եւ ամեն ինչ անենք, որպեսզի ժողովրդի անդորրը չխաթարենք: Ժողովրդին այս վայրիվերումները դուր չեն գալիս, բոլորն են տեսնում, որ այս ամենը Վեհափառը չի սկսել: Հավատավոր հոտին այս բոլոր պրոցեսները խանգարում են:

- Տիրադավների խումբը հայտարարություն էր տարածել, որ դեմ է Ավստրիայում կայանալիք Եպիսկոպոսաց ժողովին, կոչ էին արել չեղարկել այդ ժողովը: Ի դեպ, նրանք նույնպես հրավիրված են ժողովին, որովհետեւ կարգալույծ արված չեն, չնայած դուրս են եկել Մայր Աթոռի եւ իրենց հայրապետի դեմ:

- Ժողովի հարց ո՛չ իրենք են որոշում, ո՛չ էլ մենք: Այդ նախադեպը մեր Եկեղեցու համար նորություն չէ: Պատմության մեջ եղել են նման դեպքեր: Վազգեն Առաջինը 1956 թվականին Եպիսկոպոսաց ժողովը գումարել է Կահիրեում: Եղել են եպիսկոպոսաց ժողովներ Արցախում: Մի քանիսը չեն կարող դեմ արտահայտվել այդ ամենին, առավել եւս՝ նախկին հոգեւորականները: Այն որոշվել է եւ կայանալու է:

ԲԱԽՏԻ ԲԵՐՄԱՄԲ, ԹԵ ՊԱՏԱՀԱԿԱՆՈՒԹՅԱՄԲ՝ ԱՅԲԲԵՆԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ ՀԱՅՏՆՎԵԼ ԷՐ ԹՐԱՄՓԻ ԿՈՂՔԻՆ

«Հրապարակի» զրուցակիցը քաղաքագետ **Արմեն Բաղդասարյանն** է:

- Վարչապետ Նիկոլ Փաշինյանը Դավոսում՝ Համաշխարհային տնտեսական ֆորումի շրջանակում, ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի հրավերով, որպես հիմնադիր անդամ, մասնակցել է Խաղաղության խորհրդի կանոնադրության ստորագրման հանդիսավոր արարողությանը: Միջոցառմանը ներկա են եղել նաեւ հանրապետության նախագահ Վահագն Խաչատուրյանը եւ արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանը: Ստորագրման արարողությանը մասնակցել են Հայաստանի, ԱՄՆ-ի, Արգենտինայի, Ադրբեջանի, Բահրեյնի, Բելգիայի, Բուլղարիայի, Եգիպտոսի, Հունգարիայի, Ինդոնեզիայի, Հորդանանի, Ղազախստանի, Կոսովոյի, Մարոկկոյի, Պակիստանի, Կատարի, Պարագվայի, Սաուդյան Արաբիայի, Թուրքիայի, ԱՄԷ-ի, Ուզբեկստանի եւ Իսրայելի ներկայացուցիչները: Կան տեսակետներ, որ սա ՄԱԿ-ին ալտերնատիվ տարբերակ է լինելու՝ Թրամփի ղեկավարությամբ: Իսկ ԵՄ երկրները՝ Ֆրանսիա, Մեծ Բրիտանիա եւ այլն, ներկա չեն եղել միջոցառմանը. սա, կարծես, եվրոպական ընտանիքի դեմ ստեղծվող միավոր է:

- Ես կասեի, որ սա ոչ թե ՄԱԿ-ին ալտերնատիվ կամ փոխարինող տարբերակ է, այլ՝ զուգահեռ կառույց: Ոչ միայն Դոնալդ Թրամփը, այլեւ շատ այլ լիդերներ հայտարարում են, որ գործող միջազգային իրավակարգը փլուզվել է, որ այն այլեւս չկա, եւ փաստացի ձեւավորվում է մի նոր կառույց, որն առաջնորդվելու է ոչ թե միջազգային օրենքներով, որոնք գործում են, այլ՝ իրական մեխանիզմներով, ուժի իրավունք, իրական լծակներ, իրական շահեր եւ այլն: Եթե մի բան փաստացի չի գործում, փլուզվում է, ինչը մենք փաստացի տեսանք Վենեսուելայի նախագահի դեպքով, Ուկրաինա ներխուժման դեպքով, Իրանի, Գազայի դեպքերով, Գրենլանդիայի դեպքով, ապա ստացվում է, որ համակարգերը բացահայտորեն չեն գործում: Արդյունքում ստացվում է, որ այլ համակարգ պետք է գործի, որը մի կողմ է թողնելու բոլոր թիթիզությունները, որոնք իրականում ձեւականություններ են, եւ ռեալ պոլիտիկի շրջանակներում կգործի՝ ուժի կիրառմամբ: Թրամփը հանում է դա: Դրական է, որ Հայաստանն այնտեղ կա, թեպետ չգիտենք՝ այն Հայաստանին կտա՞ օգուտ, թե՞ ոչ:

- Նիկոլ Փաշինյանը երջանիկ էր, տպավորություն էր, թե Արցախն ազատագրել է, գերիներին վերադարձրել է Հայաստան.... Հայաստանի ղեկավարի ուրախության իմաստը ո՞րն էր:

- Հայաստանն ուրախանալու ոչ մի առիթ չունի, Նիկոլ Փաշինյանն ունի, որովհետեւ բախտի բերմամբ, թե պատահականության սկզբունքով՝ այբբենական կարգով հայտնվել էր Թրամփի կողքին: Մենք ունենք մտահոգվելու բան: Թրամփը Փաշինյանի հետ առանձնազրույց չի ունեցել, իսկ Ալիեւի հետ ունեցել է, ավելին՝ Ալիեւի հետ է քննարկել Թրամփի ուղին, այն դեպքում, երբ այդ համաձայնագրի հետ Ադրբեջանն ուղղակիորեն կապ չունի: Այ, այստեղ մենք մտահոգվելու մի շարք պատճառներ ունենք: Հայաստանի իշխանությունները փորձում են քարոզչությունն այլ կերպ տանել, բնական է, նման լուսանկար են հաջողացրել, դրանից փորձելու են դիվիդենտներ քաղել, սակայն իրականությունն այլ բանի մասին է:

- Իսկ ինչո՞ւ է Թրամփն այդ հարցերը քննարկում հենց Ալիեւի հետ, այլ ոչ թե Փաշինյանի:

- Թրամփը շատ պրագմատիկ քաղաքականություն է վարում, նա չի առաջնորդվում միջազգային նորմերով, այլ՝ իրական գործոններով: Նա կարծում է, որ տարածաշրջանի հետ կապված հարցերը միայն իմաստ ունի քննարկել Ադրբեջանի հետ, քանի որ Ադրբեջանն է ուժեղ կողմը: Մեզ սա պետք է մտահոգի: Ուղղակի չի էլ կարող այս ամենն անել առանց Փաշինյանի՝ Թրիփի հարցի վերաբերյալ: Նա կարծում է, որ ինչ որ պետք է Հայաստանից պոկեր, արդեն պոկել է, այժմ այդ ամենն իրացնելու համար պետք է ստանա Ալիեւի համաձայնությունը: Հայաստանը հեշտորեն զիջել է այն, ինչ իրենից պահանջել են, իսկ Ադրբեջանը դեռ ստանալու բան ունի....

- Խոսվում է Խաղաղության խորհրդի անդամավճարի մասին, որն ավելի քան մեկ միլիարդ դոլար է: Հայաստանը կարո՞ղ է այդքան գումար վճարել, վճարելո՞ւ է:

- Ես հասկացել եմ հետեւյալը. եթե ցանկանում ես այդ խորհրդի մշտական անդամ դառնալ, ապա պետք է վճարես մեկ միլիարդ դոլար, եթե ոչ, ապա երեք տարով դառնում ես ուղղակի անդամ, սակայն հետագա մեկ տարում կարող ես վճարել այդ գումարը: Վստահ եմ, որ Հայաստանը չի գնա այդ քայլին եւ չի վճարի այդ գումարը, որովհետեւ իմաստ չկա: Հայտնի չէ, թե այդ խորհուրդը երեք տարի անց ինչ ճակատագիր կունենա, եւ հետո՝ հայտնի չէ, թե Հայաստանն ինչ կարող է ստանալ այդ մեկ միլիարդի դիմաց, ի դեպ, մենք չունենք էլ այդքան գումար: Ադրբեջանը գուցե վճարի, բայց Հայաստանը՝ չեմ կարծում: Այդ գումարը Նիկոլ Փաշինյանը կծախսի այլ ուղղություններով: Նրան իր իշխանությունը պահելու համար դեռ շատ գումարներ են պետք գալու: Մենք՝ բոլորս, տեսնում ենք, թե նա ինչպես է իր թիմակիցներին կայծակնային արագությամբ հարստացնում, իսկ առաջիկայում մի շարք պոպուլիստական ծրագրերի համար նրան մեծ գումարներ են անհրաժեշտ լինելու: Էլ չենք խոսում թաքնված ընտրակաշառքի մասին՝ պարգեւավճարներ, հարկային արտոնություններ եւ այլն:

ՔՊ-Ն ԱՅԼԵՎՍ ԹՔԱԾ ՈՒՆԻ ՎԵՆԵՏԻԿԻ ԿԱՐԾԻՔԻ ՎՐԱ

ՔՊ

Խորհրդարանական «դակիչ» մեծամասնությունը երեկ հրատապ ռեժիմով շըփ-թըփ քննարկեց ու ընդունեց գաղտագողի ԱԺ բերված աղմկահարույց նախագիծը, որը փոփոխություններ ու լրացումներ է նախատեսում Ընտրական օրենսգրքում, մասնավորապես, դիտորդական առաքելություն իրականացնողներին է վերաբերում:

Չնայած թվում էր, թե այդ հարցը գործող օրենսդրությամբ կարգավորված էր. ԸՕ 30-րդ հոդվածի համաձայն՝ դիտորդական առաքելության իրավունք ունեն ՀՀ այն կազմակերպությունները, որոնք, ի թիվս այլնի, չեն աջակցում թեկնածուներին կամ ընտրություններին մասնակցող կուսակցություններին, օրենսգրքի 32-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում էր, որ դիտորդն իր իրավունքներն իրականացնելիս պարտավոր է լինել անկողմնակալ, չեզոք, հրապարակայնորեն որեւէ կանխակալ դիրքորոշում չարտահայտել կամ նախապատվելի վերաբերմունք չդրսեւորել իշխանության կամ ընդդիմության թեկնածուների, ընտրություններին մասնակցող կուսակցությունների հետ կապված որեւէ հարցի նկատմամբ, 23-րդ հոդվածն էլ արգելում է դիտորդական առաքելություն իրականացնելու համար հավատարմագրված կազմակերպություններին եւ դիտորդներին՝ զբաղվել նախընտրական քարոզչությամբ: Սակայն իշխանությունը «բացահայտել» է, որ օրենսգիրքն իբր բավարար մեխանիզմներ չի սահմանում վերոնշյալ պարտականություններն ապահովելու համար:

Նախաձեռնել է փոփոխություններ, որոնք իրականում վերահսկելի են դարձնելու դիտորդական դաշտը, հնարավորություն տալով իշխանությանը՝ ընտրությունները ծածկադմփոց անել յուրային դիտորդներով, դանիելիոաննիսյաններով, իսկ մյուսներին չգրանցելու կամ հավատարմագրումից զրկելու հիմքեր ունենալ: Օրինակ, միայն այս դրույթի ներառումը բավական է, որ ԿԸՀ-ն, ի դեմս Վահագն Հովակիմյանի, Փաշինյանի հրահանգով մերժի ոչ ցանկալի դիտորդներին:

Նոր փոփոխությամբ սահմանվում է, որ կազմակերպությունները «պարտավոր են ներկայացնել իրենց դիտորդների վարքագծի կանոնները, որոնք պետք է համապատասխանեն ընտրությունների դիտարկման միջազգային սկզբունքներին եւ սույն օրենսգրքի կանոնակարգումներին»:

Վահագն Հովակիմյանը տարատեսակ պատճառներ կարող է մոգոնել՝ հիմնավորելու, որ դիտորդական կազմակերպությունների ներկայացված կանոնները չեն համապատասխանում սահմանված ստանդարտներին, թերի են եւ այլն: Փոփոխություններից մեկով էլ պահանջում են, որ կազմակերպությունները հաշվետվություն ներկայացնեն ֆինանսական աղբյուրների, չափերի մասին, դիտորդական հայտերը ներկայացնելուն պես «պարտավոր են պահպանել դիտորդական առաքելության վարքագծի կանոնները, դրսեւորել քաղաքական չեզոքություն, չկազմակերպել կամ չիրականացնել քարոզչություն կամ հակաքարոզչություն, հրապարակայնորեն որեւէ կանխակալ դիրքորոշում չարտահայտել կամ նախապատվելի վերաբերմունք չդրսեւորել թեկնածուների, ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) հետ կապված որեւէ հարցի նկատմամբ»: Սա նշանակում է, որ դիտորդական հայտ ներկայացրած որեւէ անձի ոչ իշխանամետ ֆեյսբուքյան գրառումը կարող է որակվել հակաքարոզչություն, եւ այդ հիմքով նրան կարող են զրկել հավատարմագրումից:

Ինչպե՞ս է իշխանությունն ընտրություններից հինգ պակաս փոփոխում խաղի կանոնները՝ այն պարագայում, երբ Վենետիկի հանձնաժողովը հստակ արգելք է դնում՝ ընտրություններից առնվազն մեկ տարի առաջ չի կարելի փոփոխություններ անել Ընտրական օրենսգրքում: Նման հարցադրումներին իշխանականները երեկ պատասխանում էին, թե Վենետիկի հանձնաժողովի արգելքը միայն «ֆունդամենտալ» փոփոխություններին է վերաբերում՝ ընտրակարգի փոփոխությանը եւ դրանից ածանցվող հարցերին: Ընդդիմությունը, որ իշխանության բերած նախագծի մասին տեղեկացել էր մեկ օր առաջ՝ գիշերը, հրաժարվեց մասնակցել նախագծի քննարկմանը. խոսքը «Հայաստան» դաշինքի մասին է, Սերժ Սարգսյանի գլխավորած «Պատիվ ունեմ»-ի երեք ներկայացուցիչ դահլիճում էին: Արծվիկ Մինասյանը մեզ հետ զրույցում պնդեց՝ Վենետիկի հանձնաժողովը «սկզբունքային» դրույթների վերաբերյալ է մեկ տարվա արգելքը սահմանել, իսկ օրակարգ բերված նախագիծը հենց նման դրույթին է վերաբերում:

«Մենք առաջարկում էինք, ասում էինք՝ հիմա մի արեք սա, բերեք հանրային քննարկման, միջազգայինների, նաեւ՝ փորձագետների տեսակետները լսենք, բոլոր կողմերի տեսակետները լսենք, գանք ընդհանուր եզրակացության: Անգամ նույնիսկ եթե դուք ուզում եք մեկ տարվա կանոնը խախտել, դա պետք է իրականացվի բոլորի հետ հնարավորինս մեծ, լայն կոնսենսուսով: Նրանք մերժեցին եւ ցույց տվեցին, որ իրենց զոռբայությունը նաեւ այստեղ սահմաններ չի ճանաչում, բռնապետի հրահանգը պետք է կատարել: Նրանք նպատակ ունեն հնարավորինս ազատվել բոլոր այն դիտորդական առաքելություններից, որոնք կբացահայտեն իշխանությունների այլանդակությունները՝ կլինի քաղաքական ուժի մակարդակով, թե թեկնածուների: Մենք տեսանք, որ թե՛ Վաղարշապատի, թե՛ Գյումրիի ընտրություններում մի շարք դիտորդական առաքելություններ ինչպիսի օբյեկտիվ գնահատականներ էին տալիս ընտրական գործընթացների հետ կապված: Հիմա այս մարդիկ ուզում են փակել նաեւ այս ճանապարհը, որպեսզի հետագայում ընտրակեղծիքներ իրականացնելու միջոցով ստանան նաեւ դիտորդական առաքելությունների դրական եզրակացությունները»,- ասաց Մինասյանը

Մինասյանն էլ նշեց, որ չկան հստակ սահմանված չափորոշիչներ, որոնցով որոշելու են՝ որ դիտորդներն են չեզոք, ովքեր՝ կողմնակալ. «Ո՞վ է գնահատողը, թե տվյալ դիտորդական առաքելությունն արդյոք քաղաքական անաչառությունը պահպանո՞ւմ է, թե՞ ոչ. գնահատողը ԿԸՀ-ն է, որն ամբողջությամբ իշխանության կարգավորման եւ վերահսկողության ներքո է: Օրինակ, Կենտրոնական ընտրական հանձնաժողովն ինչպե՞ս կարող է բնութագրել, որ այս կամ այն դիտորդական կազմակերպությունը ենթադրաբար ֆինանսավորվում է որեւէ թեկնածուի կամ կուսակցության, կամ ընդդիմադիր անձի: Չկա որեւէ չափանիշ, ընդամենը ասում է, որ եթե այդ պահանջները խախտում եք, զրկվում եք դիտորդական առաքելությունից»:

Արծվիկ Մինասյանը զրուցել է ԿԸՀ նախագահ Վահագն Հովակիմյանի հետ, հարցրել, թե ինչպես են գնահատելու, թե, ասենք, ֆինանսավորման բացահայտումը որքանով է ազդում կամ չի ազդում այս կամ այն դիտորդական առաքելության անաչառության վրա. «Նա չունի պատասխան, ասում է՝ դե, կքննարկենք այդ պահին: Այսինքն, առանց չափանիշի դու ո՞նց ես գնահատում, եւ, որպես կանոն, այդ զրկումները տեղի են ունենալու իշխանությունների այլանդակությունները բարձրաձայնող դիտորդական առաքելությունների համար»:

Ի դեպ, Մինասյանը բացահայտեց, որ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը ԱԺ խորհրդի նիստում, ի պատասխան իր դիտարկումների, ասել է, որ մեզ չի հետաքրքրում թե Վենետիկի հանձնաժողովն ինչ կասի. «Ասում է՝ խորհուրդը մենք ենք, մենք ենք որոշում, ձեր առաջարկությունն էլ ընդունելի չի մեզ համար»: Ալեն Սիմոնյանին հարցրինք՝ ինքը նման բան ասե՞լ է, ԱԺ նախագահն ամոթանք տվեց Մինասյանին, թե նա ստում է: Ավելի ուշ հրապարակեց խորհրդի նիստի տեսագրությունը, որի ժամանակ Մինասյանը հարցնում է՝ ինչքանո՞վ է այս փոփոխությունների նախագիծը համապատասխանում Վենետիկի ԺՀՄԻԳ-ի սահմանած կանոններին, Ալեն Սիմոնյանը պատասխանում է. «Եկեք բովանդակության մեջ չմտնենք, մենք հիմա քննարկում ենք նիստերի օրակարգ ընդունելու հարցը, էս ինչ Դուք ասում եք, էնտեղ կքննարկեն: Եթե ԱԺ խորհուրդը որոշում է հարց օրակարգ բերի՝ Վենետիկի հանձնաժողովի կարծիքը խորհրդին հետաքրքիր չի»:

Իրականում, իսկապես պարզվեց՝ Վենետիկի կարծիքը ՔՊ-ին հետաքրքիր չէ. ոչ միայն նախագիծն օրակարգ մտցրին, այլեւ քննարկեցին ու ընդունեցին:



Լուսինե ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
lusine.shahverdyan@hraparak.am

ԱՐՑԱԽԻՑ ՎԵՐՋԻՆ ՀԱՅԵՐԸ ԵԿԱՆ

Ստեփանակերտում մնացած վերջին հայերն օրերս տեղափոխվել են Հայաստան. այս մասին տեղեկացրել է աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար Արսեն Թորոսյանը, գրել են նաեւ որոշ ադրբեջանական կայքեր՝ շեշտելով, որ ինքնակամ են հեռացել: Թորոսյանը գրել էր. «Ադրբեջանի Հանրապետությունում (Ղարաբաղում) մինչ այժմ բնակվող 10 հայեր եւ ազգությամբ ռուս մեկ ՀՀ քաղաքացի դիմել են Ադրբեջանի եւ Հայաստանի պատկան մարմիններին՝ ՀՀ տեղափոխվելու խնդրանքով»: Թե ովքեր են այդ անձինք, ինչ վիճակում են, չեն հրապարակում՝ պատճառաբանելով, թե չեն ուզում, որ նրանք թիրախավորվեն: Սոցապնախարարի խոսնակը մեզ հայտնեց, որ նրանք դիմում են գրել նախարարությանը եւ այժմ պետական վերահսկողության տակ են: «Այժմ նրանց կարիքների գնահատում է տեղի ունենում, աջակցության միջոցառումներ, այլ տեղեկություններ հավելյալ չեմ կարող հայտնել»:

Մեր աղբյուրն ասում է, որ ազգությամբ ռուս ՀՀ քաղաքացին գրող Սերգեյ Օգալցովն է, որը 23-ի տեղահանումից հետո որոշել էր մնալ, քանի որ գիրք էր գրում, որի վրա աշխատել էր 8 ամիս: Նա մի քանի ստեղծագործություն ունի՝ «Վերադարձ անդառնալիից» գիրքը, «Մեկ հոգու քաղաքը» պատմվածքը: Նա դեռեւս 24-ին էր ցանկություն հայտնել վերադառնալ Հայաստան, միավորվել ընտանիքի հետ, բայց հաջողվել է միայն հիմա: Մյուսը Ստեփանակերտի բնակիչ Միշա Գրիգորյանն է, որը մի տեսանյութում զարմանում է, թե ինչու հեռացան հայերը: Ֆրեդ Հայրապետյանը, որը սիրում էր զբոսնել Ստեփանակերտի փողոցներով: Շների կացարանում աշխատող Ռիտան, որը չթողեց իր չորքոտանիներին ու նրանց հետ է վերադարձել: Մի տղամարդ, որը հոգեկան եւ ֆիզիկական շեղումներ ունի, եւ որին ադրբեջանցի երեխաները հալածում էին: Այս պահին հայտնի չէ, թե արդյո՞ք նրանք տեղահանվածների թվում են:

Ըստ ադրբեջանական աղբյուրների՝ Ստեփանակերտում այլեւս հայ կամ ՀՀ քաղաքացի չի բնակվում:

Բռնի տեղահանվածների շրջանում լուրեր էին շրջանառվում, թե Ստեփանակերտում մնացած հայերի մի մասը ողջ չէ, մյուսները խոշտանգվել են, օրինակ՝ Միշա Գրիգորյանը՝ Գիպսի Միշիկը, որին բարեգործական ճաշարանում սնվելիս խոշտանգել են ադրբեջանցիները: «Միշիկի մատները կտրել են, ուղարկել են Գորիս, հիվանդանոցում է նա»,- պատմեց արցախցիներից մեկը:

Բռնի տեղահանվածներից մեկը պատմում է. «Օգալցովն իր տանն էր մնում: Այն ժամանակ քաղաքում միայն մենք էինք, հիմա բնակչություն կա, երեւի, անհնար է դարձել այնտեղ ապրելը»: Թե ինչ վիճակում են Ստեփանակերտի վերջին հայերը, մասամբ տեղեկանում ենք առողջապահության նախարարի գրառումից. «Բժիշկներից կազմված մեր բրիգադը, անհրաժեշտության դեպքում, օպերատիվ բուժօգնություն ցուցաբերելու նպատակով մեկնել է Լեռնային Ղարաբաղից այսօր Հայաստան տեղափոխվող մեր 11 քաղաքացիներին դիմավորելու: Այս պահին բոլորն անցել են բուժզննում, նրանցից մեկը հոսպիտալացվել է Գորիսի բժշկական կենտրոն՝ լրացուցիչ հետազոտության: 10 քաղաքացիների առողջական վիճակը բավարար է»:

Սյուզան ՍԻՄՈՆՅԱՆ
syuzan.simonyan@hraparak.am

ՀՐԱՊԱՐԱԿ

ՔԱՂԱՔԱՊԵՏՆ Ի ՍԿԶԲԱՆԵ ԳԻՏԵՐ, ՈՐ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԸ ԹԱՆԿԱՆԱԼՈՒ Է

Հունվարի 12-ից Հրազդանի ներքաղաքային երթուղին թանկացավ՝ բնակիչները 100 դրամի փոխարեն ստիպված են վճարել 150 դրամ: Տրանսպորտի գինը թանկացավ, սակայն սպասարկման որակը չլավացավ: Բազմաթիվ հրազդանցիներ դժգոհություն են հայտնում թե՛ թանկացման, թե՛ սպասարկման հետ կապված: Սոցիալական հարթակներում բուռն քննարկումներ են գնում՝ տրանսպորտի գնի բարձրացման հետ կապված: Օգտատերերից մեկը՝ Եվա Գեւորգյանը, գրել է. «Հարգելի Հրազդան համայնքի տրանսպորտի գծով պատկան մարմիններ, ինչպե՞ս է ձեր թանկագին առողջությունը, հո չե՞ք մրսել ճանապարհներին տրանսպորտին սպասելուց: Կարեւորը՝ դուք լավ եղեք, իսկ թե ինչպես է Հրազդան համայնքի մի ողջ բնակչություն, դա այդքան էլ էական չէ երեւի: Եվ ինչքա՞ն ենք մենք պայքարելու միջքաղաքային տրանսպորտի համար: Ե՞րբ է վերջապես կարգավորվելու ժամային գրաֆիկը: Թանկացումից հետո նորմալ աշխատեց ընդամենը հաշված օրեր: Հիմա նորից նույն քաոսային իրավիճակն է տիրում ողջ համայնքում: Սարքեցիք

150 դրամ, ասեցինք՝ լավ, ոչինչ, կողմ ենք նորամուծություններին: Բայց ստացանք հակառակ եւ ավելի վատ պատկեր: Վերջապես, բնակչության ձայնը ե՞րբ է լսելի դառնալու այս անտեր երկրում: Ինչքա՞ն պիտի կանգնենք ու սպասենք, այն էլ՝ այս սառնամանիք եղանակին: Հասկանում ենք՝ դժվար է, այս սառույցին տրանսպորտն էլ է դժվար երթեւեկում, բայց կարելի է, չէ՞, երկկողմանի լուծում գտնել: Խնդրանքս է եւ, ինչու ոչ՝ պահանջս է. այս գրառումս չգրել սառույցի վրա, այլ տալ ընթացք՝ համապատասխան վերջաբանով: Իսկ եթե կգտնվեն մարդիկ, ովքեր բահերով ու քլունգներով կհարձակվեն այս իմ գրառման տակ, խնդրում եմ՝ դուրս եկեք ձեր սեփական մեքենաներից եւ երկու օր (ոչ ավել, որովհետեւ չեք կարող) օգտվեք հանրային տրանսպորտից»:

Մեկ այլ քաղաքացի էլ նշում է. «Մեր քաղաքի տրանսպորտի վիճակը վատ էր, բայց այժմ ահավոր է, եթե այսպես շարունակվի, կարելի է հրաժարվել դրանցից, բացի ժամերով կանգառներում սպասելուց, չգիտես ինչու, գործարան գնացող տրանսպորտը հասել ա Քաղսի, որպեսզի Հրազդանից գնաս գործարան, պիտի 600 դրամ ծախսես: Տեսնես հրազդանցի՞ է այսպիսի ուղերթ մշակողը, շատ դժգոհ ենք ձեր աշխատանքից»:

Փաստորեն, դեռ ամիսներ առաջ որոշված էր, որ քաղաքային երթուղու սակագինը պետք է թանկանա: Հրազդան համայնքի ղեկավար Սեւակ Միքայելյանը, ստուգելու համար բնակչության տրամադրվածությունը, նախապես տրանսպորտի թանկացման հետ կապված մի գրառում էր արել, որտեղ ասվում էր. «Վերջին երեք տարիների ընթացքում Հրազդանի համայնքապետարանը պարբերաբար հայտարարել է մրցույթ՝ նոր ծառայություններ ներգրավելու նպատակով: Ցավոք, ոչ մի ընկերություն չի մասնակցել՝ պայմանավորված գործող 100 ՀՀ դրամ սակագնով: Մի շարք ընկերություններ պատրաստ են այս ոլորտում շուրջ 500 մլն ՀՀ դրամ ներդրում անել՝ նպատակ ունենալով ներգրավել ժամանակակից եւ հարմարավետ տրանսպորտային միջոցներ՝ուղեւորների եւ հատկապես հաշմանդամություն ունեցող քաղաքացիների համար բոլոր անհրաժեշտ հարմարություններով, ինչպես նաեւ՝ վերանայել գործող երթուղիների ցանցը: Սակայն նման բարելավումներն իրագործելու համար ընկերություններն առաջարկում են ներկայիս 100 ՀՀ դրամ ուղեվարձը դարձնել 150 ՀՀ դրամ՝ ժամանակակից տրանսպորտի սպասարկման եւ երթուղու որակը բարձրացնելու նպատակով: Հարգելի՛ համաքաղաքացիներ, մեզ համար չափազանց կարեւոր է լսել ձեր կարծիքը: Դուք եք որոշում կայացնելու. համայնքապետարանն այս հարցում միանձնյա որոշում չի կայացնելու: Ինչպե՞ս եք գնահատում նման փոփոխության անհրաժեշտությունը: Ի՞նչ առաջարկներ ունեք ներհամայնքային երթուղիների բարելավման վերաբերյալ: Խնդրում ենք մեկնաբանություններում կիսվել ձեր մտքերով, առաջարկություններով եւ դիտարկումներով»:

Բնակիչներն էլ իրենց կարծիքն են հայտնել, մեծամասնությունը դեմ է եղել տրանսպորտի սակագնի թանկացմանը, սակայն համայնքապետն անտեսել է հրազդանցիների արձագանքը: Հրազդանի համայնքապետարանի կողմից համայնքի ներհամայնքային ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղեւորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպությունների մրցույթը կայացել է 2025 թվականի դեկտեմբերի 2-ին: Մրցույթին մասնակցել եւ հաղթել է «Մուլտի տրանսպորտ» ՍՊԸ-ն: Այս 1 ամսվա ընթացքում արդեն համայնքապետը գիտեր, որ տրանսպորտի սակագինը 150 դրամ է լինելու, եւ միայն տրանսպորտի՝ երթուղի դուրս գալուց 2 օր առաջ է բնակիչներին տեղյակ պահում, որ «Մուլտի տրանսպորտ» ընկերությունը ներգրավել է 18 նոր տրանսպորտային միջոց՝ համայնքում առավել հարմարավետ փոխադրումներ իրականացնելու նպատակով, եւ ուղեվարձի գինը 150 դրամ է:

Քանի որ երթուղին ներհամայնքային է, փորձեցինք համայնքապետարանի մամուլի քարտուղար **Մայիս Պողոսյանից** տեղեկանալ, թե ինչ հիմնավորում կտան թանկացման հետ կապված, եւ արդյո՞ք ի սկզբանե չեն իմացել, որ տրանսպորտի գինը թանկանալու է, քանի որ հենց համայնքապետարանն է մրցույթ հայտարարում եւ մրցույթում նշում նաեւ այն պայմանները, ըստ որոնց՝ մասնակից ընկերությունն էլ պետք է հաղթի մրցույթը: Պողոսյանն ասաց, որ չի ուզում ոչ մի հարցի պատասխանել, պատճաբանելով, որ ես կարծիք եմ հայտնել եւ դրդում եմ բնակիչներին՝ չվճարել այդ 150 դրամը: Ուզում եմ Պողոսյանին հիշեցնել, որ, որպես համայնքապետարանի աշխատակից, ինքը պարտավոր է պատասխանել մեր հարցերին, դա լինի գրավոր, թե բանավոր, քանի որ աշխատավարձ է ստանում մեր հարկերից:

Ներքաղաքային երթուղու թանկացման եւ սպասարկման որակի հարցով զրուցեցինք նաեւ «Մուլտի տրանսպորտ» ՍՊԸ տնօրեն **Արթուր Դալլաքյանի** հետ: «Սուտ են խոսում, արդեն հոգնացնում են, ժամերը կանոնակարգված են այս պահից ի վեր աշխատում, արդեն 1 շաբաթ է: Երթուղի ունենք՝ 15 րոպեն մեկ է դուրս գալիս, երթուղի ունենք՝ 20 րոպե, այս սեզոնին: Իհարկե՝ փետրվարից կփոխվի»: Հարցրինք՝ 18 մեքենաներն էլ շահագործվո՞ւմ են: «Չէ, այս պահին 14 մեքենա է սպասարկում, բնականաբար, փետրվարից կսկսի փոփոխվել, երբ ուսանողությունն էլ լինի, փոխադրման առումով 3 կամ 4 տրանսպորտային միջոց կավելանա: Ինչ վերաբերում է թանկացման հետ կապված, ես դա թանկացում չեմ համարում, դա իրականություն ա: Սենց համեմատենք՝ 30 տարի մի սակագին է եղել, որն ընդհանրապես չի համապատասխանել տվյալ փոխադրմանը, իսկ հիմա որոշ չափով, կարելի է ասել, համապատասխանում է»,- ասաց Արթուր Դալլաքյանը:

Նյութերը՝
Նելլի ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ

ԱՍՏՎԱԾ ՏԱ՝ ԱՅԴ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՆԵԼՈՒ ԱՌԻԹ ՉՈՒՆԵՆԱՆՔ

Նիկոլ Փաշինյանն ու կաթողիկոսի հեռացումը պահանջող 10 տիրադավ եպիսկոպոսները հունվարի 5-ին հայտարարեցին Հայ առաքելական եկեղեցու «բարենորոգման» մեկնարկի մասին ու հրապարակեցին, այսպես կոչված, իրենց «ճանապարհային քարտեզը»: Այդ արարողությունից հետո գործընթացին մասնակից թեմերի առաջնորդները ձեռնամուխ եղան Հայ առաքելական եկեղեցու այլ սպասավորների իրենց կողմը գրավելուն՝ գործադրելով հնարավոր եւ անհնարին ճնշումներ: Նրանց աջակցում է նաեւ ողջ պետական ապարատը՝ ԱԱԾ-ի մասնակցությամբ: Հատկապես ակտիվներից է Առաքել արքեպիսկոպոս Քարամյանը, որը, լինելով Կոտայքի թեմի առաջնորդ, փորձում է իր կողմը գրավել կամ ճնշումներով իրեն ենթարկեցնել Կոտայքի մարզի եկեղեցիների հովիվներին: Անցած շաբաթ, ճնշումների ներքո, տիրադավների խմբակին միացան Կոտայքի մարզի Նոր Գեղիի Սբ Հովհաննես եկեղեցու հոգեւոր հովիվ Տեր Շահան քահանա Միրզոյանը, Լեռնանիստի Սբ Աստվածածին, Սբ Ավազան եկեղեցիների հոգեւոր հովիվ Տեր Շնորհք քահանա Մաթեւոսյանը, Չարենցավանի Սբ Փրկիչ եկեղեցու հոգեւոր հովիվ Տեր Համազասպ քահանա Հագեյանը, Գառնու Սբ Աստվածածին եկեղեցու հոգեւոր հովիվ Տեր Սմբատ քահանա Աբրահամյանը, Մայակովսկու Սբ Գեւորգ եւ Արամուսի Սբ Հակոբ եկեղեցիների հոգեւոր հովիվ Տեր Վարդան քահանա Ներսիսյանը: Կոտայքի մարզի մյուս եկեղեցիների հոգեւոր հովիվները չմիացան եկեղեցու «բարենորոգման» ծրագրին եւ ցույց տվեցին, որ իրենց անվերապահ աջակցությունն են հայտնում Մայր Աթոռին ու Գարեգին Երկրորդին:

Մենք զրուցել ենք այս թեմի մեկ այլ հոգեւորականի՝ Ջրվեժի Սուրբ Կաթողիկե եկեղեցու հոգեւոր հովիվ Տեր Հարությունի հետ: «Եկեղեցին ամեն օր, ամեն վայրկյան բարեփոխվում եւ բարենորոգվում է, եւ 1700 տարեկան լինելը դրա մասին է վկայում: Ես այս հարցին մի պատասխան ունեմ. ծնողի եւ հոր միջեւ ընտրություն անելու ո՛չ կարողություն ունեմ, ո՛չ ցանկություն, ո՛չ առիթ: Ես հոգեպես ծնունդն եմ Սուրբ Էջմիածնի, հանձնված եմ Կոտայքի թեմի առաջնորդի խնամքին, իմ հոգու, խղճի դեմ նման բան չի լինի: Ընդհակառակը՝ մի փոքրիկ լավի դիմաց գնահատվել ենք, խրախուսվել ենք: Այս առումով ես ուրիշ բան չունեմ ասելու»,- ասաց նա:

Այն եպիսկոպոսները, որոնք միացել են Փաշինյանի «բարենորոգման» ծրագրին, ճնշումներ են գործադրում քահանաների վրա, փորձել են ճնշել կամ այլ ձեւերով համոզել, որ իրենց միանաք: «Երբե՞ք, հաշվի առնելով նաեւ Կոտայքի թեմի հանգամանքը, երբե՞ք»,- ասաց Տեր Հարությունը:

Եթե Փաշինյանը որոշի այս կիրակի Ջրվեժի Սուրբ Կաթողիկե եկեղեցի գալ, պատարագի ժամանակ կզեղչե՞ք կաթողիկոսի անունը: «Հոգեւոր եղբայրներիցս մեկը վերջերս այսպիսի մի արտահայտություն էր արել, որ ով գալիս է եկեղեցի՝ ամենամեղավորից մինչեւ ամենաարդարը, եկեղեցում տեղ ունի, սիրով կընդունվի, բայց պատարագը մնում է պատարագ, պատարագը վեր է ամեն ինչից: Մենք՝ ինքներս, Սուրբ պատարագի խորհուրդի մեջ ենթարկվում ենք Սուրբ Հոգու ներգործությանը, զորությանը, որպեսզի մեր ձեռքերով Աստված իր խորհուրդը թե՛ կատարի, թե՛ ինքն իրեն բաշխի ժողովրդին, բոլոր նրանց, ովքեր սրտատրոփ սպասում են իրենց բաժնին՝ Քրիստոսին ընդունելուն: Աստված տա՝ այդ ընտրությունն անելու առիթ չունենանք»: Ըստ էության, տեր հայրն աղոթում է, որ Նիկոլ Փաշինյանն իր եկեղեցի չայցելի, եւ ինքը նման ընտրության առաջ կանգնելու առիթ չունենա: Բայց մենք վստահ ենք, որ իր հերթն էլ է գալու, որովհետեւ եկեղեցին քանդելու մոլուցքից այս մարդիկ հրաժարվելու մտադրություն կարծես թե չունեն եւ ոչ մեկին չեն խնայում:

Խտրականություն դպրոցների եւ քոլեջների միջեւ

Իջեւանցի լրագրող, Իջեւանի պետական քոլեջի դասախոս Զավեն Ալավերդյանը ճիշտ չի համարում «Մաթեմատիկա» առարկայի նկատմամբ ԿԳՄՍ նախարարության վերաբերմունքը: Ասում է. «Այս ուսումնական տարվանից դպրոցում բնագիտական առարկաներ դասավանդող ուսուցիչներին տրվում է հավելավճար, կարծեմ՝ 25 տոկոսի չափով: Հարկավ, սա ողջունելի է: Բայց ինչո՞ւ են մոռացել մաթեմատիկային, որը, ճիշտ է՝ բնական գիտություն չէ (ճշգրիտ գիտություն է), բայց առանց նրա հնարավոր չէ բնական գիտությունների պատշաճ դասավանդումը: Այնպես որ, գալիք ուսումնական տարում հարկավոր է սույն հավելավճարը հատկացնել նաեւ մաթեմատիկայի ուսուցիչներին: Ասել եք՝ Ա-ն, ասեք նաեւ Բ-ն: Հետո. բոլորովին անհասկանալի է, թե ինչու այս հավելավճարը չի տրվում միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում, որտեղ, ի տարբերություն դպրոցների, չկա նաեւ սոցիալական փաթեթ: Այսպիսի կողմնապահությունն աններելի է»:

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

ՍԻՄՈՎ

Ակսենք ՀՀ իշխանությունների եւ նրանց անմիջական առաջնորդի՝ մոտ մեկ դյուժին հոգեւորականների ամենասարսափելի ձեւով «քցելուց»: Ինչից սկսվեց դա: Պրոցեսը գնաց այն բանից հետո, երբ հակաեկեղեցական շարժման ռահվիրան, տեսնելով իր «ուղտերթերի» խայտառակ պատկերը, հայտարարեց, թե սրանից հետո իր ֆեյսբուքյան տնամերձում նախապես չի հայտնելու, թե որ եկեղեցում է պիղծ պատարագի արարողություն կատարելու: Սա բաց տեքստով նախազգուշացում էր ինչպես տիրադավ սքեմավորներին, այնպես էլ սրանց ազդեցության շրջանակներին ու աղանդավորությանը: «Գլխավոր հովիվն» իր հոգեւոր քյանդրբազության ֆիասկոն պատրաստվում էր բարդել «հարիֆների» վրա, որոնք այդպես էլ չկարողացան սրբապատշաճ ֆոն ապահովել ո՛չ իր՝ որպես շարժման առաջնորդի, ո՛չ էլ իր մասնակցությամբ «պատարագների» համար: Մարդ չէր գալիս՝ դա դեռ հարցի մի կողմն է: Հարցի մյուս՝ առավել կարեւոր կողմը բովանդակային էր, որ տիրադավների փողասիրության, կենցաղային անմաքրության եւ տգիտության պատճառով այդպես էլ մնաց չլուսաբանված: Կարճ ասած՝ քյանդրբազությունը չկպավ: Էլ եկեղեցու բարենորոգման հանձնախումբ, էլ ճանապարհային քարտեզ, էլ քաղաքական ֆինտուֆլյուշկաներ… Ոչինչ այլեւս փրկել չէր կարող վարչապետի բարձր հովանու ներքո կազմակերպված հավատուրացության շքերթը:

Թույլ տվեք մի փոքր շեղվել այս ծանր թեմայից եւ տեղափոխվել Լեւոն Տեր-Պետրոսյանի «երկրորդ գալստյան» տարիները… Հիշում եմ, Ազատության հրապարակում նա «անժամկետ» հանրահավաքների շարք էր սկսել Սերժ Սարգսյանի դեմ, իսկ Սերժ Սարգսյանն իր հերթին վերցրել ու փակել էր Օպերայի տարածքի բոլոր զուգարանները: Տեր-Պետրոսյանը զգում էր, որ ֆիասկոն մոտ է, եւ դիմեց Սերժ Սարգսյանին՝ Սերժ, քեզ եմ ասում, բացիր զուգարանները… Փաստը կա, ես ոչինչ չեմ ավելացնում: Բայց ինչո՞ւ Տեր-Պետրոսյանն այդպիսի անսովոր «խնդրանքով» դիմեց Սերժ Սարգսյանին, ի՞նչ էր պատահել: Մենք դա ավելի ուշ իմացանք: Տեր-Պետրոսյանին պատրվակ էր պետք՝ դադարեցնելու հանրահավաքները, որոնք օրեցօր ավելի սակավամարդ էին դառնում: Պատճառը, իհարկե, փակ զուգարանները չէին: Ֆիասկո էր ապրում առաջին նախագահի սկսած շարժումը, որից նրան պետք էր տարանջատվել: Եվ առաջին նախագահը հնարը գտավ՝ նա մեղադրեց ցուցարարներին, որոնք այլեւս քիչ էին, եւ հայտարարեց, որ ինքն այդ պայմաններում «չի կարող աշխատել»: Վերջ, այդպես էլ թողեց ու գնաց տուն:

Քաղաքական ֆիասկոներից գլուխը պրծացնելն անգամներով ավելի հեշտ է, քան հոգեւոր ֆիասկոյից: Բայց պատահաբար, առանց որեւէ քաղաքական հիմնավորման իշխանության հասած մարդուն որտեղի՞ց այսպիսի հետահայացություն ու խոհեմություն, որ չանի բաներ, որոնք ո՛չ իր հագով են, ո՛չ իրեն հարիր, ո՛չ էլ, առհասարակ՝ իրագործելի: Տեսավ՝ խայտառակվում է… Հիմա ուզում է «զադնի դնել», բայց պրոցեսն իրեն չի ենթարկվում, իր հունով առաջ է գնում, սպառնում՝ իրեն էլ հետը տանել գրողի ծոցը: Եկեղեցին, պարզվեց, այնքան օյիններ ունի իր իշխանության գլխին խաղալու, որոնց մասին ինքը պատկերացում չի ունեցել՝ սկսած 1975թ. հունիսի 1-ից, իր ծնված օրվանից: Իրեն թվում էր, որ եթե «ՀՀ վարչապետ» բառակապակցությունը դնի «բարենորոգության» հանձնաժողովի գլխին, փառաբանի տիրադավ եպիսկոպոսին ու վարչապետական հատուկ կոնդակով թեմական առաջնորդ հռչակի, կաթողիկոսը, կարող է պատահի, հեռանա Վեհարանից: Չես էլ կարողանում ասել՝ տո այ դմբո, քեզ պե՞տք էր մատդ մտցնել կրետի բույնը, ուրիշ գործ չունե՞ր: Լա՞վ է, որ հիմա մի ողջ ազգ հենց քեզ է մեղադրում՝ էլ Հազկերտ, էլ Նյուսալավուրտ անվանելով: Դե արի եւ ինչպես այս «հոգեւոր» էշը կոխել ես ցեխը, այնպես էլ հանիր: Ինչո՞ւ ես անտեր թողել հետեւդ գցած «հոգեւորականներին», ինչո՞ւ քո փառահեղ ստորագրությունը չես դրել նրանց վերջին հայտարարության տակ, որով պահանջում են չեղարկել արտերկրում կայանալիք Եպիսկոպոսաց ժողովը: Վախեցե՞լ ես, պատշաճ չե՞ս համարել, թե՞ հասկացել ես, որ դա ոչինչ չի փոխելու ստեղծված իրավիճակում: Քեզ լավ ճանաչելով՝ զգում եմ, որ ուզում ես թռնել: Ի՞նչ կա որ, հանուն Հայաստանի Հանրապետության ամեն ինչ էլ կարելի է անել: Ջեյմս Բոնդը, օրինակ, ամեն անգամ երբ արթնանում էր հերթական գեղեցկուհու անկողնում, խաչակնքվում էր ու ինքն իրեն հանգստացնում՝ ինչե՞ր չես անի հանուն Մեծ Բրիտանիայի միապետի: Դու ինչո՞վ ես պակաս այդ լեգենդար հետախույզից: Թռիր, փրկվիր

ՄԵԾ «ՔՅՈՅԻ»

այս հոգեւոր լաբիրինթոսից: Եղածը մի դյուժին սքեմավոր չի՞…

Այս ընթացքում քչերի՞ն ես «քցել» «հանուն Հայաստանի Հանրապետության»: Իսկ եթե տիրադավներն էլ ըմբոստանան քո դեմ, ոչ մի խնդիր չի առաջանա: Մեկից «Բենթլին» կխլես, մյուսից՝ քո տված թեմական առաջնորդի պաշտոնը, երրորդի դեմ կոմպրոմատներ շաղ կտաս… Ի՞նչ է պատահել որ:

Էդիկ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
edik.andreasyan@hraparak.am

ԴՈՒՔ ԲՁԲՁՈՒՄ ԵՔ, ՄԵՆՔ ԿՈՐԾԱՆՈՒՄ ԵՆՔ

Բարկացած Արարատ Միրզոյան չէինք տեսել: Արտգործնախարարի նորացված այս տարբերակը, կարելի է ասել՝ Միրզոյան-պրոմաքս-2026 կամ ավելի նորաձեւ՝ ուղղակի Միրզոյան-26, հանդես է գալիս, ինչպես ասում են, նույն «կորպուսով», բայց ունի, կարծես, նոր կարգավորումներ՝ բարկանալ, տաքանալ, խոսել արտահայտիչ ժեստիկուլյացիայով, օգտագործել մանիպուլյացիոն համեմատություններ, հերքել ամեն ինչ ու ամեն կերպ, կիրառել արտիստիզմ, օգտվել փաշինյանական լեքսիկոնից: Ենթադրելի է, որ կարգավորումներում հաստատ կա նաեւ սպառնալու եւ հայհոյելու հնարավորությունը, բայց դրանք արտգործնախարարը դեռեւս չի կիրառում: Դա էլ կլինի: Ինքն ասաց, որ առաջիկա ամիսներին մանիպուլյացիաները կթեժանան եւ կակտիվանան քաղաքական դաշտում, թերեւս, նկատի ունենալով իրենց ընդդիմախոսներին, բայց՝ ինչեւէ: Պատրաստվում են ընտրություններին, եւ նոր տարբերակով Արարատ Միրզոյանը պատգամավորների հարցերին պատասխանում էր անբռնազբոս ու ինքնավստահ. 26 տոկոսանոց հաջողություն գրանցած բանակցողի ինքնավստահություն չէր դա, անգամ 74 տոկոսից էլ բարձր էր:

ԹՐԻՓՓ-ում 26 տոկոսի հայկական մասնաբաժինը «Հայաստանի ողորմելիության ինդեքս» էր գնահատել նախկին արտգործնախարար Վարդան Օսկանյանը: «Դուք եք ողորմելի, որ «Հայռուսգազարդը», Իրանից գազատար խողովակը, պարտքի դիմաց գույքը եւ ինչ-որ էլի գույքեր տվել եք այլ պետության»,- մոտավորապես այսպիսի պատասխան է տալիս այդ գնահատականին մի իշխանության ներկայացուցիչ, որն այլ պետությանը՝ ամենածանր ու ցավալի սցենարով տվել է մեր հայրենիքի մի մեծ հատված: Կորցրել է Արցախը՝ 100%-ով, մոռացել է դրա մասին, մեղադրել է ուրիշներին, նախկիններին, բոլորին միասին եւ յուրաքանչյուրին՝ առանձին-առանձին, փակել է այդ էջը, թշնամուն դարձրել է բարեկամ, սկսել է արդեն առեւտուր անել, ճանապարհ է տվել՝ անխոչընդոտ, անդադար շնորհակալություններ է հայտնել: Ամեն ինչ լավ է: Հիմա ինչ են ուզում այդ նախկինները, ինչո՞ւ են գալիս իրենց գրառումներով ու հոռետեսությամբ փչացնում այս մարդկանց տոնը. խաղաղություն է, 26 տոկոսը ձեռքբերում է, Արցախը Ադրբեջան է, եւ վերջ, ի՞նչ են անվերջ բզբզում:

Եվ, ուրեմն, մեջբերում ենք Միրզոյանի խոսքից. «…Ու ի՞նչ եք ուզում, անընդհատ բզբզում, բզբզում եք, որ լրիվ վատ լինի, որ լրիվ կործանենք…»: Ամբողջ ելույթում, որտեղ կային բազմաթիվ խոցելի պնդումներ, այս հատվածն ուղղակի խոցում է լսողի սիրտը: Այստեղ անգամ բարկություն չէ, որ հնչում է, այլ, կարծես, խնդրանք՝ մի արեք այնպես, որ առանց այդ էլ վատը ավելի վատ դառնա, որ հանկարծ վերջնական չկործանենք: Ուրեմն, նոր տարբերակով խոսող Միրզոյանի մեջ, համենայնդեպս, ամբողջությամբ ջնջված չեն անկեղծության եւ մեղքի զգացման կարգավորումները: Դրանք թաքնված են ենթագիտակցության շերտերում ու էմոցիոնալ պահին ի հայտ են գալիս՝ հռետորի կամքից լիովին անկախ: Հոգեբանները կասեն ու կհաստատեն, որ վատը լավ ներկայացնել հնարավոր է, բայց համոզիչ չէ, երբ դրանց ամբողջ հոգով չի հավատում հռետորը, եթե նա գիտակցում է իրական իրականությունը: Այդ դեպքում այն թաքցնելու համար շատ ավելի մեծ ջանքեր, մեծ արտիստիզմ եւ էլի լիքը այլ հատկանիշներ են պետք:

Եվ, իհարկե, տպավորիչ էր Վարդան Օսկանյանի պատասխանը, տպավորիչ՝ իր սառնասրտությամբ: Սա էլ, թերեւս, հոգեբանական ճիշտ հակառակ դրությունն է, երբ մարդն արդեն ապացուցված է համարում իր կանխատեսումը, ու գնահատականն այլեւս վերջնական է: Էլ չի երկարացնում, թեկուզեւ ցավով է պնդում իր համոզմունքը, ավելացնելու ոչինչ չունի, բացի՝ «Կարծում եմ՝ «ողորմելի» բառի օգտագործումը չափազանց մեղմ է»:

Շաքե ԱՎՈՅԱՆ

ՎԻՐՈՒՍ

ԵՐԲ ԱՆՀԱՆԳՍՏԱՆԱԼ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՃԱԽ ՀԻՎԱՆԴԱՆԱԼՈՒ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ

«Հաճախ հիվանդացող երեխաներ» (ՀՀԵ) տերմինն ավելի շատ դիսպանսերային դիտարկման ենթակա երեխաների կլինիկական եւ վիճակագրական խումբ է եւ ներառված չէ Առողջապահության համաշխարհային կազմակերպության միջազգային դասակարգման մեջ: Սա նշանակում է, որ այն մանկաբույժների կողմից չի դիտարկվում իբրեւ առանձին հիվանդություն, այլ ուղղված է սուր շնչառական հիվանդությունների (ՍՇՀ) հաճախականության եւ առաջնային իմունային անբավարարությունների միջեւ եղած հավանական կապի բացահայտմանը: Իսկ դրա համար անհրաժեշտ է նման երեխաներին պահել մասնագիտական վերահսկողության եւ ծնողների ուշադրության կենտրոնում:

ՀԻՄՆԱԿԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

2026 թվականին առկա տվյալների համաձայն, ՍՇՀ-ով հիվանդացությունը տարբեր տարիքային խմբերում իրարից տարբերվում է եւ ռական վիրուսային վարակի 4 կամ ավելի դեպք:

Պետք է նշել, որ մանկապարտեզ հաճախող երեխաների պարագայում այս թիվը կարող է լինել տարեկան 8 անգամ, եւ եթե երեխայի մոտ հիվանդությունն ընթանում է առանց բարդությունների, այն համարվում է նորմա:

Առողջապահության համաշխարհային կազմակերպությունն ու Իմունային անբավարարության եվրոպական ընկերությունը (European Society for Immunodeficiencies) պարզապես ՍՇՀ-ների քանակը հաշվելու եւ ֆիքսելու փոխարեն խորհուրդ են տալիս ուշադրություն դարձնել, այսպես կոչված, «կարմիր դրոշակներին», որոնք կարող են վկայել պաթոլոգիայի մասին:

1. Ծանրություն եւ բարդություններ՝ տարեկան 2 կամ ավելի թոքաբորբի առկայություն, մաշկի կամ այլ օրգանների վրա կրկնվող աբսցեսներ (թարախակույտեր):

2. Բուժման արդյունավետություն՝ հակաբիոտիկների երկարատեւ (2 եւ ավելի ամիս), բայց ոչ արդյունավետ ազդեցություն:

3. Հիվանդության տեղայնացում՝ մեկ տարվա ընթացքում 8 կամ ավելի թարախային միջին ականջաբորբ կամ 2 անգամից ավելի ծանր սինուսիտ:

4. Պրոցեսի զարգացում՝ հաճախակի հիվանդանալու հետեւանքով երեխայի քաշի եւ հասակի ֆիզիոլոգիական ցուցանիշները սկսում են հետ մնալ տարիքային նորմերից:

Ներկայում բժիշկների մասնագիտական ուշադրությունը ՍՇՀ-ի քանակից տեղափոխվել է ապաքինման որակի վրա: Եթե երեխան, հաճախակի հիվանդացության ֆոնին, ինքնուրույն եւ առանց բարդությունների ապաքինվում է 7-10 օրվա ընթացքում, ապա, ընդհանուր առմամբ, համարվում է առողջ:

Որոնք են երեխաների ՍՇՀ-ով հաճախակի հիվանդանալու պատճառները

1. Սոցիալական՝ մանկապարտեզ հաճախելու սկիզբ («հարմարվողականություն»), ընտանիքում պասիվ ծխելը, վատ էկոլոգիա:

2. Բժշկական՝ քրոնիկ վարակի չբուժված օջախներ (ադենոիդներ, տոնզիլիտ), վիտամին D-ի անբավարարություն, ալերգիկ ֆոն:

3. Իմունոլոգիական՝ իմունային համակարգի բնական անհասունություն, որը «մարզվում» է վիրուսների հետ շփման միջոցով:

Ինչ պետք է անեն ծնողները

• Օդի հիգիենա՝ ննջասենյակում պահպանել 40-60% C խոնավություն եւ 18-22°C ջերմաստիճան:

• Պատվաստում՝ Ազգային օրացույցից բացի, խորհուրդ է տրվում պատվաստումներ կատարել պնեւմոկոկի, Haemophilus influenzae-ի եւ տարեկան գրիպի դեմ:

• Ռեժիմ՝ լավ քուն եւ ամենօրյա զբոսանքներ:

• Ձնում՝ այցելություն քիթ-կոկորդ-ականջաբանին՝ ադենոիդների հիպերտրոֆիան բացառելու համար, եւ ալերգոլոգին՝ ալերգիկ ռինիտը բացառելու համար, որոնք հաճախ շփոթում են մրսածության հետ:

Ծովինար ՊՈՂՈՍՅԱՆ

«ՀԱՅՓՈՍՏԸ» ԹՐԱՄՓԻ ՈՐՈՇՄԱՆ ԲԵՌԸ ՈՐՈՇԵԼ Է ԴՆԵԼ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՎՐԱ



2025 թվականի դեկտեմբերի 16-ին քաղաքացի Արմեն Ալեքսանյանը ցանկացել է «Հայփոստով» ծանրոց ուղարկել ԱՄՆ-ում բնակվող իր բարեկամին, ասում է՝ օրենքով արգելված չիր: Ապրանքը բաց տեսքով կշռել է, ասել են՝ պետք է տեղափոխման ծառայության համար 1 կգ-ի դիմաց վճարի 10 հազար դրամ: Ծանրոցը կշռել է մոտ 800 գրամ, բայց քաղաքացուց եւս 10 տոկոս հավելավճար են պահանջել.ԱՄՆ նախագահի կողմից սահմանված մաքսատուրքն է՝ ասել են:

«Քանի որ ես ձեռներեցությամբ եմ զբաղվում եւ փոստային ծառայություններից հաճախ եմ օգտվում, զարմացա պահանջից: Ասացի՝ չի կարող մի երկրի նախագահը մեկ այլ երկրի ներքին գործերին վերաբերող որոշում կայացնել: Պահանջեցի, որ իրավական ակտի հղումը տան, ծանոթանամ»,- պատմում է «Հրապարակին» դիմած քաղաքացին, որը պահանջել է՝ այդ պահանջի առնչությամբ իրենից բանավոր բողոք ընդունեն:

«Ծանոթացել էի «Հայփոստի» ներքին կանոնադրությանը եւ գիտեի, որ բանավոր բողոք ընդունելն այդ փաստաթղթում ամրագրված է: Բայց իրենք համառորեն գրավոր էին պահանջում: Ասում եմ՝ գրավոր խոսքս բանավորիս նման ճարտար չէ, ընդունեք բանավորը: Ինձ ծաղրում են, թե բա՝ ո՞նց ես բարձրագույն կրթություն ստացել, երբ գրել չգիտես: Դե արի, դրանց բացատրի, որ գրավոր ճարտար խոսքն ու անտառաճանաչությունը տարբեր բաներ են: Խիստ վիրավորվեցի: Բավական չէ՝ անտեղի հավելավճար են պահանջում, նյարդերդ են քայքայում, դեռ մի բան էլ վիրավորում են»,- ասաց քաղաքացին:

Եվ դեկտեմբերից մինչ օրս Արմեն Ալեքսանյանն իր այդ փոքրիկ ծանրոցը չի կարողանում ուղարկել ԱՄՆ: Անընդհատ տանում-բերում են կամ մերժում են՝ հեռախոսով: Ասում են՝ կընդունվի, երբ 10 տոկոս հավելավճարը մուծեք:

Տեւական վիճաբանություններից ու քաշքշուկներից հետո ԱՄՆ նախագահի որոշումը՝ անգլերենով, ի վերջո, տրամադրել են: Պարզվել է՝ ԱՄՆ բեռնափոխադրում, փոստային ծառայություն եւ նմանատիպ այլ ծառայություններ մատուցողների նկատմամբ, ըստ դրույքաչափի, սահմանվել է պարտավորություն՝ բեռ ստացողից գանձել եւ ԱՄՆ կառավարությանը փոխանցել համապատասխան մաքսավճար՝ այդ երկիր մուտքագրած ապրանքների դիմաց:

«Իսկ նման մաքսավճարի պարտադիր պահանջը ապրանք ստացողի նկատմամբ է, որը ես չեմ: ԱՄՆ կառավարության համար էական չէ՝ այդ գումարը գանձվելու է ապրանք առաքողից, ստացողից, թեշահագռգիռ այլ կողմից: Փաստորեն, «Հայփոստը» որոշել է, որ ինքն է շահագրգիռ կողմը, եւ, չարաշահելով ազգային օպերատորի լիազորությունները, սկսել է հավելյալ գումարներ գանձել քաղաքացիներից»,-կարծիք է հայտնում Արմեն Ալեքսանյանը:

«Հայփոստի» անօրինական պահանջի եւ աշխատակիցների անբարյացակամ վերաբերմունքի մասին քաղաքացին դիմել է ՀՀ վարչապետի աշխատակազմին ու բարձրտեխնոլոգիական արդյունաբերության նախարարին: Ի տարբերություն վերջինիս, որտեղից դեռ արձագանք չի ստացել, վարչապետի աշխատակազմից պատասխանել են, որ նամակը վերահասցեագրել են ԲՏԱ-ին: Իսկ դա նշանակում է, որ քաղաքացին, իր բողոքով, հայտնվել է կառավարության շրջապտույտի մեջ եւ չի կարողանում սպառիչ պատասխան ու հարցի լուծում ստանալ:

Սերոբ ՄԱՐՈՒԹՅԱՆ

Ո՞Վ Է ԼԻՆԵԼՈՒ ԹՐԱՄՓԻ «ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎԱՀԱՋՈՐԴԸ» 2028-ԻՆ

ԱՄՆ նախագահի ընտրությունները սարերի ետեւում չեն, երկու տարուց՝ 2028 թվականին, Միացյալ Նահանգները կրկին ընտրական շրջապտույտի մեջ է ընկղմվելու: Իսկ ամերիկյան ընտրական համակարգն այնպիսին է, որ նախընտրական պրոցեսները շատ ավելի վաղ են սկսվում, եւ ընտրություններին մասնակցող կուսակցությունները երկար ու բավականին մանրակրկիտ աշխատանք են կատարում: Այսպես. ԱՄՆ Հանրապետական կուսակցությունը հայտարարում է, որ 2028 թվականի նախագահական ընտրությունների համար թեկնածուների լավ «բազա» ունի, որտեղից կարող են թեկնածուներ առաջադրվել եւ շարունակել Թրամփի թողած ժառանգությունը զարգացնել: Այս մասին գրում է NewsNation պարբերականը: Ավելին, Թրամփը՝ ինքը, ունի ֆավորիտ թեկնածուներ, թե ովքեր կարող են 28 թվականին առաջադրվել եւ հնարավորության դեպքում՝ փոխարինել իրեն ու շարունակել իր քաղաքական գիծը: Այժմյան դրությամբ Թրամփը երեք հոգու է առանձնացնում իր թիմից՝ որպես իր «քաղաքական ժառանգորդ»՝ գալիք ընտրությունների համար.

• փոխնախագահ Ջեյ Դի Վենս

• պետքարտուղար Մարկո Ռուբիո

• ֆինանսների նախարար Սքոթ Բեսենթ:

Ընդ որում, Վենսը, ըստ ավելի վաղ Սպիտակ տան ներկայիս ղեկավարի արած հայտարարությունների, ամենահավանական թեկնածուն է, որ կարող է առաջադրվել Հանրապետական կուսակցության կողմից, որպես 28 թվականի նախագահական ընտրություններում թեկնածու: Թրամփը կարծում է, որ դեռ վաղ է խոսել «քաղաքական ժառանգորդների» մասին, սակայն եւ ֆիքսել է, որ Վենսը հիանալի է աշխատում ու, ըստ էության, ֆավորիտ է այս պահին եղած թեկնածուների մեջ: Նա նաեւ հավելել է, որ Մարկո Ռուբիոն, ամենայն հավանականությամբ, աշխատելու է նաեւ Վենսի հետ՝ ինչ-որ ֆորմատով, եթե վերջինս առաջադրվի եւ դառնա նախագահ: Հիշեցնենք, որ նախագահ Դոնալդ Թրամփն առաջին անգամ ԱՄՆ նախագահ է դարձել 2016 թվականին: 2020 թվականին նա նախագահական ընտրություններում պարտվել է դեմոկրատ Ջո Բայդենին, սակայն 2024 թվականին նորից վերադարձել է Սպիտակ տուն: ԱՄՆ Սահմանադրության 22-րդ ուղղումն արգելում է նույն անձին երկու անգամից ավել դառնալ նախագահ: Թրամփը 2025 թվականի հոկտեմբերին հայտարարել է, թե բացառվում է, որ ինչ-որ «իրավական սողանցք» գտնելով՝ 28 թվականին նորից առաջադրվի:

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԿԻՆՈ

ՍԵՐԻԱԼՆԵՐ ԵՆ ՆԿԱՐԱՀԱՆՈՒՄ ԵՎ ՍԵՐԻԱԼՆԵՐ ԵՆ ՓԱԿՈՒՄ

«Կոմիսար Մեգրեն» ամենից հայտնի ֆրանսիական դետեկտիվ սերիալներից է: Սերիալը ստեղծվել է բելգիացի գրող Ժորժ Սիմենոնի՝ կոմիսար Ժյուլ Մեգրեի մասին պատմող 75 վեպերի եւ 28 պատմվածքների հիման վրա: Այն համարվում է նաեւ ոստիկանական դրամատիկ սերիալ, որն այդ ժանրում 20-րդ դարի դասական սերիալների շարքն է դասվում: Մեգրեի մասին պատմող առաջին գիրքը Սիմենոնը գրել է 5 օրում՝ 1929 թվականին, երբ իր զբոսանավով կանգ էր առել նիդերլանդական Դելֆսհեյլում: Հետո արդեն Մեգրեի կերպարի պատվին հուշարձան է կանգնեցվում այդ նավահանգստում: Կերպարի ստեղծման հարցում թեեւ Սիմենոնը որոշակի հաստատուն գծեր պահպանել է բոլոր գործերում, սակայն անվան հարցում որոշակիորեն տատանվել է՝ իր հերոսին կոչել Ժյուլ Ժոզեֆ Անսելմ Մեգրե, թե Ժյուլ Ամադե Ֆրանսուա Մեգրե:

Համաձայն վեպերի, կերպարը մոտ 180 սմ հասակ եւ ավելի քան 110 կգ քաշ ունեցող բարեհոգի ոստիկան է, որին անվանում են Բարեհոգի կոմիսար, թեեւ նաեւ բավականին փնթփնթան է: Բացահայտում է ամենալավ կազմակերպված ու իրականացված հանցագործությունները՝ սեփական մեթոդի օգնությամբ: Միշտ փորձում է հասնել արդարության, սակայն զուրկ չէ մարդկային ապրումներից, կարեկցանքից: Ծագումով աղքատ ընտանիքից է, անցել է աշխատանքային երկարատեւ ուղի՝ ոստիկանության տեսուչից դառնալով հատկապես ծանր հանցագործությունների քննությամբ զբաղվող քննչական խմբի ղեկավար: Ուսանել է բժշկություն, բայց ուսումը կիսատ է թողել նյութական անբարեկեցիկ վիճակի պատճառով եւ գնացել է աշխատելու ոստիկանական համակարգում, որտեղ էլ փայլուն կարիերա է կառուցել: Ոստիկանական ծառայության ընթացքում առնվազն չորս անգամ վիրավորվել է: Գրական եւ էկրանային հերոսը ամուսնացած է Լուիզա Մեգրեի հետ, որը տնային տնտեսուհի է, սիրում է զրուցել: Իսկ կոմիսարը նաեւ գուրման է եւ սիրում է համեղ ուտեստներ ճաշակել: Որքան էլ հետաքրքիր է, դա նաեւ սերիալում է երեւում՝ չափազանց մտախոհ է՝ մեքենա վարելու համար: Մեքենա չի վարում: Անհրաժեշտության դեպքում նրանց մեքենան վարում է կինը: Երեխաներ չունեն: Այստեղ էլ Սիմենոնը հստակություն չի մտցնում: Կամ երեխան ծնվել է մահացած, կամ մահացել է ծնվելու ժամանակ:

Կոմիսար Մեգրեի մասին սերիալը նկարահանվել է 1991-2005 թվականին: Մեգրեի դերում հանդես է եկել Բրյուսնո Կրամերը: Անցյալ տարի, հատուկ անգլալեզու լսարանի համար, նոր էկրանավորում էլ է իրականացվել, որտեղ որոշակի փոփոխություններ են կատարվել կերպարում, եւ սերիալը դարձվել է ավելի ժամանակակից ու դինամիկ:

Netflix-ը գիտաֆանտաստիկ ժանրի սերիալ է փակում: Netflix-ի ստրիմինգային ծառայությունը հայտարարել է, որ փակում է գիտաֆանտաստիկ ժանրի «Ալիսան՝ սահմանամերձ գոտում» ճապոնական հայտնի սերիալը՝ երրորդ սեզոնից հետո, որը վերջին ամփոփիչ սեզոնն է: Հրապարակման մեջ նշվում է, որ սերիալի երրորդ սեզոնն ունեցել է 25 միլիոն դիտում՝ վերջին վեց ամսվա ընթացքում: Թե ինչու է Netflix-ը որոշել փակել հայտնի եւ սիրված նախագիծը, չի մանրամասնվում: «Ալիսան՝ սահմանամերձ գոտում» ճապոնական դրաման նկարահանվել է Խարո Ասոյի համանուն գործի հիման վրա: Սյուժեի հիմքում մի տղայի եւ աղջկա պատմությունն է, ովքեր հայտնվել են անմարդաբնակ դարձած Տոկիոյում եւ ստիպված են վտանգավոր խաղերի մասնակցել: IMDb-ի գնահատմամբ, այն 10 հնարավորից հավաքել է 7,8 միավոր:

1999 թվականին Օլիվեր Պարկերը Օսկար Ուայլդի համանուն պիեսի հիման վրա նկարահանել է «Իդեալական ամուսին» կինոնկարը, որով պետք է 99-ին փակվեր Կաննի միջազգային կինոփառատոնը: Այն, ինչպեսեւ կարելի էր սպասել, իր արժանի տեղն է գտել թե՛ հանդիսատեսի սրտերում, թե՛ կինոքննադատների շրջանում: Անգլիական կինոարվեստը մեծ երկյուղածություն ունի դասական գործերի էկրանավորման հանդեպ, ուստի, ինչպես նկատում են մասնագետները, ֆիլմը դիտելիս զգացվում է, թե որքան հոգատար վերաբերմունք է ցուցաբերվել, որքան աշխատանք է տարվել, ջանք ու եռանդ դրվել, որպեսզի ստեղծվեն Վիկտորիանական դարաշրջանի բրիտանական միջավայրն ու մթնոլորտը:

Ընտանեկան մի միջոցառման ժամանակ անկաշառ քաղաքական գործիչ Ռոբերտ Չիլթերնի տանը, որի կերպարը մարմնավորել է Ջերեմի Նորթհեմը, հայտնվում է գեղեցկադեմ տիկին Լորա Չիվլին՝ Ջուլիանա Մուրը, եւ ժպիտը դեմքին՝ տանտիրոջը սպառնում է բացահայտել անցյալի որոշ մութ էջեր: Տիկին Չիվլիի կյանքի հավատամքն ամփոփված է մեկ արտահայտության մեջ. «Աշխարհում ամեն բան կարելի է գնել, միայն որոշ բաներ թանկ են ավելի»: Կնքվում է գործարք: Չիլթերնը պետք է պառլամենտում պաշտպանի իր շահերը, իսկ ինքն էլ «լեզուն ատամների հետեւում է պահելու»՝ փորձելով մոռանալ ջենթլմենի կյանքի «որոշ մութ էջեր»: Իսկ շանտաժի առարկան այնպիսի բան է, որ կարող է հարվածի տակ դնել Չիլթերնի եւ կնոջ՝ Գերտրուդայի ամուսնությունը, որին մարմնավորել է Քեյթ Բլանշետը: Սկանդալն անխուսափելի կլիներ: Բայց Չիլթերնը պատրաստ է ամեն գնով պահպանել ամուսնությունը: Իրավիճակը փորձում է փրկել՝ Չիլթերնին օգնության հասնելով ցինիկ ազնվական՝ լորդ Արթուր Գորինգը՝ Ռուպերտ Էվերեթը: Նա անթերի արտաքին ունի, ցինիկ է, լավ հումորի զգացում եւ անկաշառ ու աներեր բնավորություն: Նախկինում նշանադրված է եղել տիկին Չիվլիի հետ եւ որոշում է, որ պետք է օգնի բարեկամին՝ ազատվելու Չիվլիի սարդոստայնից:

Մասնագետները նշում են՝ «Իդեալական ամուսինը» պիեսի հաջողված էկրանավորումն է, որտեղ առկա է ամեն բան, որը հատուկ է լավ կինոնկարին՝ համոզիչ դերասանական խաղ, սուր սցենար, վառ դեկորացիաներ եւ կոստյումներ, այնպիսի հարցերի արծարծում, որոնք ակտուալ են նաեւ այսօր: Ֆիլմը, իհարկե, պիեսից որոշ տարընթերցումներ ունի, սակայն դա էլ պետք է դիտարկել ռեժիսորական ստեղծարարության կոնտեքստում:

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՄԱՅԹԵՐԸ ՁԵԶ Ի՞ՆՉ ԷԻՆ ԱՐԵԼ, ՈՐ ՎԵՐԱՑՐԻՔ

Ստորոգ փողոցները, անկասկած, աչք են շոյում: Բայց մեր օրերում յուրաքանչյուր հիմնանորոգված փողոց իշխանությունների համար դարձել է ժողովրդի աչքին թոզ փչելու հիմնարար առիթ: «Տեսեք, նախկինները թալանում էին, իսկ մենք բարեկարգում ենք»,- հրճվանքով ազդարարում են ու հպարտորեն հաշվետվություն ներկայացնում փռված ասֆալտի կիլոմետրերով: Նոր ասֆալտ տեսնելու ակնկալիքով՝ շրջեցի Լոռու մարզկենտրոն Վանաձորում: Սանկտ Պետերբուրգի փողոց՝ քաղաքի կարեւոր զարկերակ: Այժմ այն լիարժեք այլընտրանքային ճանապարհ է՝ մայրաքաղաք տանող տրանսպորտի համար: Մինչ հիմնանորոգումը փողոցի ասֆալտը հիշեցնում էր տանկային պոլիգոն, եւ վարորդները նախընտրում էին մշտապես ծանրաբեռնված Երեւանյան խճուղին: Անցյալ տարի նորոգումն ավարտվեց: Գովելի է, չես ժխտի: Բայց… փողոցը միայն մեկ մայթ ունի: Մինչդեռ ի ծնե երկուսն էին: Գուցե բացառությո՞ւն է: Ներսիսյան փողոց՝ կարեւոր օղակ, որը կապում է Դիմաց եւ Հուշարձանային խոշոր թաղամասերը: Հիմնանորոգումն այստեղ էլ է նոր ավարտվել: Եվ այստեղ էլ՝ նույն պատկերը: Մեկ մայթն անհետացել է:

Ինչ խոսք, մայթերի կորուստը ոչ միայն անհարմարություններ է ստեղծում հետիոտների համար, այլեւ աղավաղում է քաղաքի գեղագիտական տեսքը: Աչքի համար հաճելի չեն նախկին մայթերին թափթփված շինարարական նյութերը, կենցաղային աղբը, մարդաբոյ բույսերն ու թփերը, կիսակառույց ու կիսաքանդ կրպակները, գազի խողովակաշարերը, ցանկապատերը: Բայց կա ավելի լուրջ խնդիր:

Մայթ չունեցող, ավտոտրանսպորտով ծանրաբեռնված փողոցներում հնարավո՞ր է ապահովել երթեւեկության անվտանգությունը՝ թե՛ վարորդների, թե՛ ուղեւորների, թե՛ հետիոտների համար: Երբ մայթ չկա, հետիոտնն ակամա հայտնվում է ճանապարհի բանուկ հատվածում: Մարդիկ քայլում են կողք-կողքի՝ վտանգելով իրենց: Այդ ընթացքում ետեւից մեքենաներ են գալիս: Վարորդը պետք է շրջանցի հետիոտնին: Իսկ եթե դիմացից մեքենաների հոսք կա՞: Բախման, վթարի, դժբախտ պատահարի հավանականությունը դառնում է իրական: Երեկոյան ժամերին, մթության պայմաններում վտանգը տասնապատկվում է: Դիմացից եկող մեքենայի լույսերը կուրացնում են վարորդին, հետիոտնը մնում է աննկատ, եւ աղետը յոթ սարի ետեւում չէ: Բնակիչների վկայությամբ՝ դժբախտ դեպքեր արդեն եղել են: Բարեբախտաբար՝ թեթեւ վնասներով: Առայժմ:

Լոռու մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետ Ռուբեն Մարգարյանի, աշխատակից Վահրամ Դանիելյանի եւ Վանաձորի համայնքապետարանի գլխավոր ճարտարապետ Արմեն Ալավերդյանի օգնությամբ փորձեցի պարզել նոր նորոգված փողոցների՝ մեկ մայթով «կաղալու» գաղտնիքը: Պարզվեց՝ շինարարները մեղավոր չեն: Արել են այն, ինչ գրված է նախագծանախահաշվային փաստաթղթերում: «Աղվեսի պոչն» այլ տեղ է թաղված: Պարզվում է՝ մայթերը «խուզելով»՝ խնայում են դրամական միջոցներ: Մի քանի փողոցից վերացրած մայթերի հաշվին գումար է տնտեսվում՝ մեկ ուրիշ փողոց նորոգելու համար: Եվ այդ նոր փողոցն էլ, այո, կունենա միայն մեկ մայթ:

Ո՞վ կամ ովքե՞ր են նման որոշում կայացրել: Իհարկե՝ «վերեւներում» նստածները: Կայացրել են ու փողոցների նորոգման «կոնվեյերը» միացրել: Երկու-երեք փողոցի մայթերից խնայված գումարներով հնարավոր է նոր փողոց «ձեռք գցել», մեկ զոհը մեկ ամբողջ կյանք է, որն այդ խնայված միջոցների հետ համեմատել չի կարելի:

ՀԳ. *Իհարկե, շատ թաղամասերում բնակիչներն իրենք էլ անփույթ ու անհեռատես են գտնվում եւ իրենք իրենց զրկում են մայթ ունենալու հնարավորությունից: Սիրելի քաղաքացիներ, ձեր ապօրինի կառույցները, ցանկապատված ծաղկանոցները, փայտաթիթեղաշեն տնակները, կուտակված շինաղբը խանգարում են նորոգողներին եւ դժվարացնում հետիոտների անցումը: Ճիշտ է, դուք օգտվում եք հսկողության լիակատար բացակայությունից: Իսկ համայնքապետարանները, ձեր հարկերից վարձատրվելով, մատը մատին չեն տալիս՝ անօրինությունների դեմ պայքարելու, բացատրական աշխատանք տանելու եւ մայթերն ազատելու համար:*

Գագիկ ԱՆՏՈՆՅԱՆ

ՍՏԱԽՈՍՈՒԹՅՈ՞ՒՆ, ԹԵ՞Ո ԱՆՏԵՂՅԱԿՈՒԹՅՈՒՆ

Գագիկ ԱՆՏՈՆՅԱՆ

Մեր վարչապետ Նիկոլ Փաշինյանն ամեն ինչով «հանճար» է: Ամբողջ աշխարհի պետությունների ղեկավարները՝ համահավաք, այնքան առատ նյութ չեն տալիս լրագրողներին, երգիծաբաններին, վերլուծաբաններին, ինչքան մեն-մենակ Նիկոլ Փաշինյանը: Եկեք տեսնենք, թե ինչպես է գործում այն իշխանությունը, որը հայտարարում է, թե պայքարում է «եկեղեցու սրբապղծության» դեմ: Այդ նպատակի համար նա որոշել է օգնության դիմել բոլորին՝ անգամ սատանային, բայց առայժմ «դիմում է» միայն մարդկանց, որոնց մասին բազում առասպելներն ու իրական պատմություններն են շրջանառվում: Ահա՝ լրագրողը պարզ եւ անկեղծ հարց է ուղղում նրան. «Տեղյա՞կ եք, որ Ձեր կողքին կանգնած հոգեւորականն այսպես եւ այսպիսի բաներ է արել»: Պատասխան. «Տեղյակ չեմ»:

Միանգամից ուզում ես հարց տալ. «Ինչպե՞ս թե տեղյակ չես, հենց այն փաստը, որ տիրադավ է եւ կանգնած է քո կողքին, մի՞թե սրբապղծություն չէ»: Պարզ է, որ իշխանությունը փորձում է պարտադրել հասարակությանը՝ ստի հագուստով «անտեղյակություն»: Սակայն դա պետք է սթափեցնի սովորական քաղաքացուն, որն իրեն նեղություն չի տալիս՝ հարցնելու. «Հարգարժան վարչապետ, բայց լրագրողի հարցից հետո իմացա՞ք, թե՞ էլի չիմացաք՝ ինչն ինչոց է: Գուցե էլի՞ անտեղյակ եք կամ անտեղյակ եք ձեւանում, որովհետեւ հարմար է «անտեղյակ» խաղալը»:

Բայց վարչապետը, որն ինքն իրեն ներկայացնում է որպես բարոյականության եւ ճշմարտության մարգարե, ոչ միայն չի գիտակցում իրականությունը, այլեւ փորձում է թաքնվել անտեղյակության տակ՝ անտեղյակությունը մատուցելով որպես ազգափրկիչ սկզբունք: Բայց զավեշտը ծաղկում է, երբ նա հայտարարում է. «Մեզնից ոչ մեկը սուրբ կամ անմեղ չի»: Կամ՝ «այդ մարդիկ ապաշխարել են իրենց արածների համար»: Ո՞ւմ են ապաշխարել՝ իրե՞ն, միանալով եկեղեցակործան իր ծրագրին: Մինչդեռ հենց ինքը փորձում է սրբապղծության դեմ պայքարել՝ իր կողքին ունենալով «պղծվածներ», որոնց մասին ողջ երկիրն է խոսում:

Սա քաղաքական կրկես է. այստեղ գլխավոր դերակատարը՝ վարչապետը, իրեն ներկայացնում է որպես կույր դատավոր, որի տեսադաշտում չեն տեղավորվում սեփական դաշնակիցների արատները, բայց գերազանցապես տեղյակ է բոլորի «մեղքերի» մասին եւ «թողություն» է տվել այդ մեղքերին: Նրա «անմեղ» դեմքը խոսում է անտեղյակության «բարձր արվեստի» մասին, բայց իրականում դա ոչ այլ ինչ է, քան ստի քողարկված արվեստ, դերասանություն, կեղծիք:

Երկիրը կանգնած է ստի եւ անտեղյակության խաչմերուկում, որտեղ իշխանությունը բացահայտորեն օգտագործում է իր լեգիտիմությունը՝ արդարացնելու սեփական անտեղյակությունը: Եվ ամենավտանգավորը՝ այդ «անտեղյակությունը» դառնում է օրենք, հրահանգ, որը պարտադրում է ժողովրդին: «Անտեղյակների» այդ կուսակցությունը՝ ՔՊ-ն, ստի գլխավոր դաշնակիցը, արդեն չի էլ թաքցնում սուտն ու կեղծիքը, իսկ հասարակությունը ծափահարելով զարմանում է, թե ինչպես է ստախոսությունը դառնում քաղաքական վարքագիծ, ճշմարտությունը՝ հանցանք, պղծությունը՝ բարենորոգման ուղենիշ:

Հայաստանի վարչապետը նոր մասնագիտություն ունի. նա մեր երկրի գլխավոր անտեղյակն է: Ոչ թե պարզապես ինչ-որ բան չի իմացել, այլ անտեղյակ է, եւ դա այնքան հմտորեն, այնքան համակարգված է անում, որ այդ անտեղյակությունը դառնում է քաղաքական մեթոդ, փիլիսոփայություն, գրեթե՝ պետական գաղափարախոսություն: «Տեղյակ չեմ»,- ասում է նա, երբ հիշեցնում են ժամանակին իր ստացած ծրարների եւ դրանց բացահայտման մասին, որը մի քանի տարի առաջ ողջ հանրությունն էր քննարկում: Եվ վերջ: Քննարկումը փակված է: Ճշմարտությունը պարտվել է անտեղյակությանը:

Վարչապետը հայտարարում է, որ պայքարում է սրբապղծության դեմ: Պայքարում է՝ օգտագործելով ամեն տեսակի ամբիոններ, բարոյախրատական մեթոդներ, ձեռքը սրտին է դնում, անմեղ աչքեր է անում: Եվ այդ պայքարում իր կողքին կանգնած են մարդիկ, որոնց մասին հասարակության մեջ տարիներ շարունակ շրջանառվում են ամենածանր մեղադրանքները: Բայց վարչապետը ոչինչ չգիտի: Ոչ մի բան: Սպիտակ թուղթ: Դա այլեւս պարզապես «չգիտեմ» չէ: Դա արդեն քաղաքական ալիբի է:

Անտեղյակ եմ - նշանակում է՝ պատասխանատու չեմ:

Անտեղյակ եմ - նշանակում է՝ կարող եմ դատել բոլորին, բացի ինձնից:

Անտեղյակ եմ - նշանակում է՝ բարոյականության չափանիշը ես եմ:

Եվ երբ հավելում է. «Մեզնից որեւէ մեկը անմեղ կամ սուրբ ձեւանալու մտադրություն չունի», հարց է առաջանում. իսկ ինչո՞ւ եք ձեւանում մաքրագործման առաջնորդ: Եթե բոլորս մեղավոր ենք, ապա ինչո՞ւ եք քար նետում մի քանիսի վրա: Ինչպե՞ս իմացաք, որ Կճոյանն ու մյուսները ապաշխարել են, իսկ Ձեզ քննադատող սրբազանները՝ ոչ:

Եթե սրբություն հաստատելուն եք ձգտում, ապա ինչո՞ւ եք խաղում սրբապղծության բառապաշարով: Եթե անտեղյակ եք Ձեր դաշնակիցների հանցանքների մասին, ապա ինչպե՞ս եք այդքան լավ տեղեկացված Ձեր հակառակորդների «մեղքերի» մասին:

Սա դասական կրկես է, որտեղ կույր արդարադատության տակ ոմն անձ որոշել է հարվածել մեր արմատներին, ոչնչացնել իր հակառակորդներին, փակել իրեն քննադատողների բերանը: Ցարսն այն է, որ այս ամենը տեղի է ունենում տեսախցիկների առաջ, բաց տեքստով, առանց ամոթի: Ստախոսությունը նույնիսկ չի թաքցվում. այն ներկայացվում է որպես պարզություն, անկեղծություն, բարենորոգում, պետական շահ: Իրականում սա վտանգավոր բանաձեւ է. երբ իշխանությունը բարոյական դատավորի դեր է խաղում, բայց հրաժարվում է իմանալ, հաշվի նստել փաստերի հետ եւ խրվում է անբարոյականության տիղմի մեջ: Խնդիրը ոչ թե Եկեղեցին է, ոչ թե հոգեւորականները, ոչ էլ անգամ մեղադրանքները, այլ խնդիր է դրված. «Ստախոսությունը հռչակվել է անտեղյակություն, եւ անտեղյակությունը դարձել է քաղաքական զենք»:

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, զանգեք մեզ
011 (55,94) 52 66 70, info@hraparak.am
Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԱՋՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ

բաժանորդագրություն
Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսս Ստենդ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01

Հրապարակ
Գլխավոր խմբագիր Արմինե Օհանյան
թողարկման պատասխանատու info@hraparak.am
Ստորագրված է տպագրության 24.01.2026թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:

ԸՆԴԴԻՄՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏՔ Է ԿԱՐՈՂԱՆԱ ՉՆՈՒՅՆԱՑՆԵԼ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Գալուստ ՍԱՐԳՍՅԱՆ

Գալիք նախընտրական գործընթացներում ընդդիմության կողմից ամենաշատ քննադատվողը, թերեւս, պետությունն ու պետական համակարգն են լինելու: Սակայն, հեռու լինելով պետության եւ պետական համակարգի դատապաշտպանը լինելու մտքից, միեւնույն ժամանակ կուզեինք հավաքական ընդդիմության ուշադրությունը սեւեռել մի կարեւոր հանգամանքի վրա: Այդ հանգամանքը պետության եւ պետական համակարգի էության բաղկացուցիչն է, եւ շատ հարցերում հենց ինքն էլ պայմանավորում է պետության եւ պետական համակարգի իրավիճակային գործելակերպն ու գործողությունները:

Այդ հանգամանքը տարբեր իրավիճակներում պետության կողմից ընտրություն կատարելու մեթոդաբանությանն է վերաբերում: Հարցն այն է, որ պետության կամ պետական համակարգի ընտրությունը ոչ թե կողմերի, այլ՝ ուժերի միջեւ է լինում: Պետությունն ու պետական համակարգը երբեք ու ոչ մի պարագայում հակամարտող կողմերից մեկին չէ, որ ընտրում են: Նրանց ընտրությունը միշտ էլ հակամարտող ուժերից մեկին ընտրելու եւ մյուսին չընտրելու գործընթաց է լինում:

Այս իմաստով, Հայաստանի հավաքական ընդդիմության խնդիրը, թերեւս, ոչ այնքան այս անարդյունավետ ու պատահական իշխանության սխալականությունն ապացուցելն ու դրանով ընտրությունների կողմ դառնալն է, որքան, սեփական օրակարգն առաջ տանելով, այս ձախողված ու պատահական իշխանություններին ձեռնոց նետող ուժի վերածվելը:

Այս երկրի հավաքական ընդդիմությունը, իվերջո, պետք է կարողանա չնույնացնել պետությունն ու իշխանությունը: Նա պետք է հավատա 35-ամյա մեր պետությանն ու նրա կայացվածությանը: Պետք է հավատա, որ այս պետությունն ամենեւին էլ այն պետությունը չէ, ինչպես որ նրան ներկայացնում է Փաշինյան Նիկոլը:

Պետք է հավատա, որ երբ գա պահը, եւ ինքը, ընտրության կողմ լինելուց բացի, նաեւ պետությանն ընտրություն կատարելու հնարավորություն տվող ուժ դարձած լինի, այն ժամանակ այս պետությունն իր «կայացած պետություն» լինելն անպայման կապացուցի: Կապացուցի, որովհետեւ, եթե նա մինչ այսօր դա չի ապացուցել, ապա չի ապացուցել ոչ թե այն պատճառով, որ կայացած չի եղել, այլ՝ որովհետեւ ընտրություն կատարելու հնարավորություն չի ունեցել, որովհետեւ այդ հնարավորությունից զրկված է եղել:

Իսկ որպեսզի գա պետության «ընտրելու պահը», այս երկրի հավաքական ընդդիմությանը պետք է, որ ինքն իրեն հանի պետությանը «Նիկոլի ստրուկ լինելու մեջ» մեղադրողի դերից եւ պետությանն ընտրելու հնարավորություն տվող ուժի վերածվի: Պետք է հասկանա, որ այնքան ժամանակ, քանի դեռ ինքն իրեն կտեսնի պետությանը «Նիկոլի ստրուկը լինելու մեջ» մեղադրողի դերում, ճիշտ այդքան ժամանակ էլ այս պետությունը Նիկոլի կողքին կլինի: Իսկ այդքան ժամանակ նրա կողքին կլինի, որովհետեւ հենց այդքան ժամանակ էլ նա Նիկոլի եւ ինչ-որ ուժի միջեւ ընտրելու հնարավորությունից զրկված կլինի: Այդպես կլինի, որովհետեւ պետության ընտրությունը միշտ էլ ոչ թե կողմերի, այլ ուժերի միջեւ ընտրություն է եղել, ու այդպես է լինելու: Պետությունն ուրիշ ձեւի ընտրություն չի անի: Չի անի, որովհետեւ ուրիշ ձեւ նա ընտրել չգիտի:

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, Պետ. գրանցման վկայական՝ 03Ա 082118 տրված 09.09.08
Երեւան 0010, Մաշտոցի 4, հեռ. 52 66 70, info@hraparak.am